Azg Ազգ

2 ՓԵՏՐՈՒԱՐ 2011 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ 16(4635)

ISSN: 1829-1651

Ադրբեջանում «արաբական հեղափոխությունը» արմատախիլ է արվում դեռ չսկսված

Հունվարի 27-ին, ճիշտ այն օրը, երբ Եգիպտոսի խոշոր քաղաքներում մարդիկ ելել էին փողոցներ՝ պահանջելով նախագահ Մուբարաքի հրաժարականը, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հանձնարարականով նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհտիևի գլխավորությամբ տեղի էր ունենում «Ադրբեջանում կոռուպցիայի դեմ պայքարի կոմիտե»-ի ընդլայնված կազմով նիստ: Ու հենց այդ նիստի ժամանակ հայտնաբերվեց, որ երկրում կոռուպցիայի բազմաթիվ փաստեր կան, որ ժողովրդի դժգոհությունը ահագնանում է. «կոմիտեն որոշեց, որ կձեռնարկվեն կտրուկ քայլեր՝ կարճ ժամանակահատվածում այդ հարցերին լուծում տալու համար»: Ուրեմն այստեղ արդեն, երբ որևէ մեկը՝ այն էլ Ադրբեջանի պես երկրում, խոսում է «կոռուպցիան կարճ ժամանակում վերացնելու մասին», արդեն իսկ ակնհայտ ստում է կամ փորձառու չէ: Ռամիզ Մեհտիևի վերաբերյալ չի կարելի ասել, որ փորձառու չէ: Ինչևէ, արդեն «դիմելով կտրուկ քայլերի», հունվարի 31-ին Իլհամ Ալիևը հրամանագիր ստորագրեց «Ադրբեջանում կոռուպցիայի դեմ ուժեղացված պայքարի մասին»: Նույն օրը երկրի արդարադատության նախարարությունում հրավիրվեց կոլեգիայի նիստ՝ գործի կոչելու նախագահի հրամանագիրը: Անշուշտ, կարիք չկա մանրամասն անդրադառնալու նախարար Ֆիկրեթ Մամեդովի հետնիստյան ասուլիսին, որտեղ նա նշել է, որ «Ադրբեջանում վերջին տարիներին լուրջ քայլեր են ձեռնարկվել կոռուպցիայի վերացման ուղղությամբ», փոխարենը մանրամասնենք որոշ «կտրուկ քայլեր»: Այսպես՝ նախագահի հրամանագրով Ադրբեջանի դատախազություն են ուղարկվել 4 հոգու գործեր, վարչական տուգանքի են ենթարկվել արդարադատության համակարգի 220 աշխատակիցներ, նրանցից 26-ը ազատվել են պաշտոնից: Նախարար Մամեդովը նաեւ շեշտել է, որ այսուհետեւ արդարադատության նախարարությունում քաղաքացիների համար կգործի «թեժ գիծ» հեռախոսահամար, որին կարող են զանգահարել կոռուպցիայից տուժած ադրբեջանցիները: *Տես էջ 2*

«Վիքիլիկսի» բացահայտումները ծառայեցին նպատակին

Հակակառավարական ցույցերը Եգիպտոսի գլխավորությամբ շարունակվում են տարածաշրջանի երկրներում

ՀԱԿՈԲ ՉԱՔԲՅԱՆ

«Վիքիլիկսի» բացահայտումները սկսել էին հրապարակվել դեռեւս անցյալ տարվա հուլիսին: Սակայն դրանք համատարած բնույթ ստացան, հետեւաբար եւ միջազգային լայն հնչեղություն՝ նոյեմբերին, երբ այս կայքը հրապարակ հանեց 1600 գաղտնի փաստաթուղթ: Փաստաթղթերը, մեծաթիվ քաղված լինելով ամերիկյան դիվանագիտական նամակագրություններից, պետքարտուղարության կամ Կենտրոնական հետախուզական վարչության սեփականությունն էին:

Քանի որ փաստաթղթերն առնչվում էին տարբեր երկրների ղեկավարների անձնական կյանքին, ընտանիքի անդամների կամայականություններին, հափշտակված ազգային հարստությունից գոյացած կարողություններին, ի վնաս սեփական պետության Արեւմուտքին արած զիջումներին եւ ազգային շահերին դավաճանելու դրսեւորումներին, հետեւաբար վարկաբեկող էին: Ընդ որում՝ վարկաբեկման գլխավոր թիրախ էին ընտրվել Մերձավոր եւ Միջին Արեւելքի ու հարակից շրջանների, մասնավորապես հյուսիսաֆրիկյան պետությունների ղեկավարները:

Մինչ աշխարհի առաջնակարգ լրատվամիջոցները, ընդգծելով բացահայտումների սենսացիոն բնույթը, ջանասիրաբար միջազգային օրակարգում էին պահում հրապարակված փաստաթղթերը, իսկ փաստաթղթերում հիշատակվող պետական գործիչները արդարանում, զայրույթով հերքում մեղադրանքը կամ խուճապի էին մատնվում, «Վիքիլիկսը» շանտաժի կարգով սպառնում էր, թե ձեռքի տակ ունի ավելի քան 250 հազար փաստաթղթեր եւ հրապարակելու է նաեւ դրանք:

Երբ այսպիսի մասշտաբի բացահայտումներ են արվում, ինչպիսին «Վիքիլիկսն» արեց, եւ գաղտնազերծվում են ԱՄՆ-ի պես գերտերության օտարերկրյա ներկայացուցչությունների նամակագրությունը կամ ամերիկյան դիվանագետների գաղտնի հանդիպումների սղագրությունը, ակամա հարց է առաջանում, թե դրանք ինչպես են հայտնվել բացահայտողների ձեռքում, հայտնվե՞լ են, թե՞ ուղղակի կամ միջնորդավորված տրամադրվել: Ավելին, եթե կարելի էր ինտերնետի միջոցով գողանալ այդ փաստաթղթերը, ապա ինչո՞ւ որեւէ կայք մինչ այդ չգողացավ, կամ ինչո՞ւ չկանխվեց «Վիքիլիկսի» համատարած գողությունը: Այս դեպքում էլ պետք է հարցնել՝ ո՞րն է դրա նպատակը:

Թեեւ բարձրացված հարցերից ոչ մեկը նույնիսկ չարծարծվեց, սակայն հունվարի սկզբներին, երբ ծավալվում էին «Վիքիլիկսի» բարձրացրած աղմուկն ու դրանով պայմանավորված իրարանցումը տարածաշրջանում, Դարֆուրը ինքնորոշվեց Սուդանում, որին հետեւեց Լիբանանի կառավարական ճգնաժամը: Մինչ շարունակվում էին ճգնաժամի հաղթահարման միջազգային ջանքերը, հունվարի 14-ին Թունիսում հակակառավարական խռովությունների հետեւանքով տապալվեց նախագահ Զեյնալ Աբիդին բեն Ալին: *Տես էջ 2*

Լուժկովը կեցության իրավունք է ստացել Մեծ Բրիտանիայում

Մոսկվայի նախկին քաղաքապետ Յուրի Լուժկովի շրջապատի աղբյուրներ վկայակոչելով, Life News կայքը հաղորդում է, որ Լուժկովը կեցության իրավունք է ստացել Մեծ Բրիտանիայում:

ՌԴ-ում Մեծ Բրիտանիայի դեսպանատանը կայքի թղթակցին ասել են, որ նման կարգավիճակ ստանալու համար անհրաժեշտ է այնտեղ ունենալ անշարժ գույք եւ երկրի տնտեսության մեջ ներդնել 200 հազարից մինչեւ 1 միլիոն ֆունտ ստեռլինգ:

Բրիտանացի դիվանագետները հրաժարվել են մեկնաբանել, թե Լուժկովը որքան ժամանակ կարող է անարգել մնալ գործել երկիր: Ընդամին նրանք ընդգծել են, որ նախկին քաղաքապետը բոլոր փաստաթղթերը պետք է ստանար ընդհանուր հիմունքներով: «Մեր երկրում նախկին պաշտոնյաների համար արտոնություններ չկան», ասել են նրանք:

Ավելի վաղ Յուրի Լուժկովը փորձել էր կեցության իրավունք ստանալ Լատվիայում եւ մտադրվել էր նման փորձ անել Ավստրիայում:

Չելյաբինսկի նոր փոխնահանգապետը հայ է

Ռուսաստանի Չելյաբինսկի մարզի նահանգապետ Միխայիլ Յուրեւիչը նոր տեղակալի նշանակման հրաման է ստորագրել: Ինչպես հայտնում է Ռուսաստանի հայկական «Երկրամաս» թերթի տեղեկատվական կենտրոնը, նոր փոխնահանգապետ է դարձել **Ալեքսեյ Հովակիմյանը: Նա հարավուրալյան նահանգապետի տեղակալ է նշանակվել իրավական, գույքային եւ ներդրումային հարցերով: Վերջին վեց տարիներին Հովակիմյանը «Աուդիտորական ֆիրմա Ավուար» ընկերության զարգացման գծով գործադիր տնօրենն է եւ հիմնադիրը: Կարիերայի սկզբում Հովակիմյանն աշխատել է հարկային ոստիկանությունում, այնուհետեւ՝ տնտեսության հարցերով մարզային կոմիտեում: 2004 թվականից գլխավորում է «Կորպորացիա Սիմվոլ» ԲԲԸ-ն: Զուգահեռաբար Հովակիմյանը զբաղվել է մանկավարժական գործունեությամբ՝ սանձալով տնտեսական գիտությունների թեկնածուի կոչում: Նա Ռուսաստանի աուդիտորական պալատի Ուրալի մասնաճյուղի խորհրդի անդամ է, ինչպես նաեւ ՌԴ նախագահի Ուրալի դաշնային մարզի լիազոր ներկայացուցչի աշխատակազմի ոչ հաստիֆային խորհրդականը:** Հ. Ա.

Մեկնած գնացքի հետեւից

Կամ՝ ի՞նչ դիրքորոշում որդեգրել ԼՂ հարցով ԵԵԽՎ ենթահանձնաժողովի հետ կապված

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երեկ խորհրդարանում լրագրողներին հանդիպած ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակության անդամները (Դավիթ Հարությունյանը, Նարիա Զոհրաբյանը եւ Արմեն Մելիքյանը) ԵԽԽՎ ձմեռային նստաշրջանն ամփոփելիս հստակեցրին իրենց վերաբերմունքը ԵԽԽՎ բյուրոյի որոշմամբ հունվարի 28-ին վերակենդանացված ԼՂ հարցով ենթահանձնաժողովի վերաբերյալ: Պատվիրակության ղեկավար **Դավիթ Հարությունյանը լուրջ վերապահումներ ուներ այդ ենթահանձնաժողովի աշխատանքի վերսկսման առթիվ, քանի որ այն կարող է վտանգել ԼՂ բանակցային գործընթացը, բացի դրանից՝ կարող է վերածվել ոչ թե երկխոսության, այլ առճակատումների հարթակի: «Մենք չենք մասնակցի», ասաց, թեեւ ենթահանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու վերաբերյալ դիրքորոշումը դեռ պաշտոնապես հստակ չէ, քննարկումներ պետք է լինեն: Բայց ամենաօպտիմալ որոշումը Դ. Հարությունյանը համարում է այդ ենթահանձնաժողովի աշխատանքների սառեցումը՝ մինչեւ որեւէ այլ ողջամիտ ելք գտնվի: «ԼՂ խնդրի կարգավորմանը վնասող որեւէ կառույցի աշխատանքների մեջ չենք մասնակցելու», հայտարարեց նա: Մի բան հստակ է՝ ենթահանձնաժողովը չի կարող օբյեկտիվ աշխատել, հենց դրանով է պայմանավորված եղել ԵԽԽՎ բյուրոյում հայկական պատվիրակության հայտարարությունը, թե մեր պատվիրակությունը չի ուզում մասնակցել այն աշխատանքներին, որոնք ակնհայտ աղակառուցողական բնույթ են կրելու:**

Դ. Հարությունյանն ասում էր, թե վեհաժողովն իրեն խայտառակեց ակնհայտ կողմնակալ գործելակերպով, եւ եթե դա Հայաստանի հարցով նախկին համազեկուցող Գորան Լինդբլադի պատճառով էր (համենայն դեպս՝ այդպիսի կարծիք հնչել է այնտեղ), ապա, ԵԽ քաղաքական խմբերից մեկի ղեկավարի՝ Դ. Հարությունյանի մեջբերած խոսքով՝ «Սա աղտակ էր խորհրդարանական վեհաժողովին, երբ բոլորս կողմ քվեարկեցինք մի մարդու համազեկուցող նշանակելուն, որն այնուհետեւ հայտարարեց, որ մեկ այլ երկրի կոնտրակտային լոբբիստ է, այսինքն՝ Ադրբեջանի»: *Տես էջ 3*

Նախագահի նոր գլխավոր խորհրդական

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով Արամ Ղարիբյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության նախագահի գլխավոր խորհրդական:

Ցյան տեղումները կշարունակվեն մինչեւ փետրվարի 3-ը

Առաջիկա օրվա ընթացքում հանրապետության ողջ տարածքում առատ տեղումները կդադարեն:

Ուժեղ ձյունն ու քամին կշարունակվեն մինչեւ փետրվարի 3-ը: «Հայդետհիդրոմետ» հիդրոօդերեւութաբանության կենտրոնի ղեկավար **Զարուհի Պետրոսյանը** «**Ազգ**»-ի հետ զրույցում ասաց, որ վաղը հանրապետությունում կհաստատվի առանց տեղումների եղանակ: Այսօր ցերեկը հանրապետությունում կգրանցվի -2-7 աստիճան ցուրտ: Հովտային շրջաններում կգրանցվի -5 -9 աստիճան, իսկ ցերեկը՝ 0 -3 աստիճան ցուրտ:

Երեւանում ցերեկը կգրանցվի 0 -2 աստիճան ցուրտ:

Առաջիկա գիշերը լեռնային ու նախալեռնային շրջանների լեռնանցքներում կդիտվի թույլ բուք, իսկ ճանապարհներին՝ մերկասառույց:

Երեւանի քաղաքապետարանի հասարակայնության հետ կապերի վարչության փոխանցմամբ՝ մայրաքաղաքի բոլոր շրջաններում կշարունակվեն փողոցների մաքրման աշխատանքները, որոնք, ի դեպ, երեկ սկսվել էին ոչ թե վաղ առավոտյանից, այլ կեսօրվա մոտ: Փողոցների եւ մայթերի մաքրման աշխատանքներում ներգրավված է 46 ձյուն մաքրող, 23 աքցան եւ 19 մայթ մաքրող հատուկ տեխնիկա: Քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության փոխանցմամբ էլ մայրաքաղաքում հասարակական տրանսպորտը կշարունակի աշխատել սահմանված ժամանակացույցով: Երեւանում աշխատող 112 միկրոավտոբուսային եւ 29 ավտոբուսային երթուղիների գրաֆիկում էական փոփոխություններ չեն արձանագրվել: Տրանսպորտի վարչության փոխանցմամբ՝ հասարակական տրանսպորտը 90 տոկոսով պատրաստ է եղանակային նման պայմաններում աշխատելուն: Բացի դրանից՝ քաղաքապետարանից հրահանգ է ի-ջեցվել բոլոր շահագործող կազմակերպություններին՝ քարմացնելու եւ կարգի բերելու տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակը:

Երեկվա դրությամբ շարունակում էր փակ մնալ Սելիմի լեռնանցքը, Թալին, Մարալիկ, Գյումրի եւ Աշոցք տանող ճանապարհները դժվարանցանելի են: Քուչակից Աղարան տանող ճանապարհահատվածում բուք է: Դպրավանք, Վարդենիս, ճամբարակ, Վայք տանող ճանապարհներին տեսանելիությունը շատ ցածր է՝ 5-7 մետր: Հ. Հ.

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Քայլեր՝ ուղղված գործազրկության կրճատմանը

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պետ **Սոնա Հարությունյանը** երեկ «Դե ֆակտո» ակումբում ներկայացրեց զբաղվածության կարգավորման 2010 թվականի պետական ծրագրի արդյունքները, ոլորտի խնդիրներն ու հետագա միջոցառումները: Անցյալ տարվա ընթացքում զբաղվածության մարզային ու տարածքային կենտրոններում խորհրդատվություն է ստացել 206348 անձ՝ նախատեսված 120000-ի փոխարեն: Տարվա ընթացքում աշխատանքի է տեղավորվել 11315 աշխատանք փնտրող՝ նախատեսված 8800-ի փոխարեն: Աշխատանքի է տեղավորվել հաշվառված երիտասարդների 14,7 տոկոսը՝ 2962 հոգի՝ նախատեսված 2 տոկոսի փոխարեն: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում աճել է զբաղվածության մարզային ու տարածքային կենտրոնների հետ համագործակցող գործատուների թիվը եւ բարելավվել խոշոր գործատուների հետ համագործակցությունը: Տարվա ընթացքում գործատուներից ստացված թափուր աշխատատեղերի թիվը կազմել է 7927: Սոնա Հարությունյանը տեղեկացրեց, որ կազմակերպվել են աշխատանքային 6 տոնավաճառներ, որոնց արդյունքում աշխատանքի են տեղավորվել 458 հոգի: 2010-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ գործազրկության մակարդակը կազմել է 6,9 տոկոս, մինչդեռ անցյալ տարվա սկզբին այդ թիվը 7,1 տոկոս էր: Հաշվառված են 93555 աշխատանք փնտրողներ, որոնցից 79500-ը ստացել են գործազուրկի կարգավիճակ: Սոնա Հարությունյանը նշեց, որ գործող օրենսդրության համաձայն՝ գործազուրկներ են համարվում աշխատանք փնտրող այն անձինք, որոնք չեն ստանում որեւէ կենսաթոշակ, պատրաստական են անցնելու հարմար աշխատանքի եւ հաշվառված են Զբաղվածության պետական ծառայությունում կամ տարածքային մարմիններում:

Զբաղվածության ոլորտում 2011-ին նախատեսված միջոցառումները բխում են ոլորտի հիմնախնդիրներից ու առաջադրված գերակայություններից, որոնք են աշխատաշուկայում առաջարկի ու պահանջարկի անհամապատասխանության կրճատումը, հաշմանդամների զբաղվածության աղահովումը, օրենսդրության կատարելագործումը եւ այլն: Բացի պետական ծրագրերից, վերոնշյալ խնդիրների լուծմանն են ուղղված գործակալության միջազգային համագործակցության համատեքստում իրականացվող միջոցառումները: Օրինակ՝ հաշմանդամների զբաղվածությանն աջակցելու նպատակով «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը HDP հիմնադրամի հետ եւ Հոլանդիայի կառավարության աջակցությամբ կշարունակի իրականացնել հաշմանդամներին ուղղված ծրագիրը, որի մեջ ընդգրկվելու են շուրջ 240 հաշմանդամներ: Այս ծրագրի նպատակն է հաշմանդամներին ինտեգրել աշխատանքային գործունեության մեջ:

Ի. Պ.

Վթարներ առաս ձյան պատճառով

Ոստիկանության մամուլի ծառայության տվյալներով՝ երեկ առաս ձյան պատճառով Հայաստանում 6 պատահար է գրանցվել, որոնց ընթացքում 7 մարդ է տուժել: Երեւանում տեղի ունեցած 4 պատահարից 5 մարդ է տուժել: Մահացու ելքով պատահարներ չեն եղել: Այս տվյալներում ներառված չեն այն պատահարները, որոնցում տուժածներ չկան: Ընդ որում՝ վթարվել է նաեւ այն մեքենան, որով Արթիկ էին մեկնել լրագրողներ՝ լուսաբանելու «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագրի բողոքի ինքնությունը: Մասնավորապես հասվածի անանցանելիության պատճառով մեքենան 15 մետր գլորվել է ձորը: Վթարի պահին մեքենայում են եղել Գագիկ Շամշյանը, «Ֆոտոլուր» գործակալության ֆոտոլուսանկարիչ Տիգրան Թադեւոսյանը, E-press լրատվական գործակալության թղթակից Լիլիթ Թադեւոսյանն ու նույն գործակալության օպերատոր Տիգրան Հակոբյանը: Բարեբախտաբար նրանք չեն վնասվել:

Մ. Խ.

Ադրբեջանում «արաբական հեղափոխությունը» արմատախիլ է արվում դեռ չսկսված

1-ին էջից

Մեկ այլ քննարկման թեմա է, թե բազմաթիվ ադրբեջանցիներից քանիսը համարձակություն կունենան զանգահարելու նախարարություն, եթե, իհարկե, հեռախոսահամարն իրոք գոյություն ունենա:

Այժմ, ադրբեջանական այլ զարգացումների մասին: Ինչպես տեղեկանում ենք այդ երկրի ընդդիմադիր «Ենի Մուսաֆաթ» թերթից, «Ադրբեջանում իրականացվող այսպես կոչված «բարեփոխումներից» պաշտոններից շուտով կարող են զրկվել տրանսպորտի նախարար Զիա Մեմեդովը, անշարժ գույքի պետական կոմիտեի նախագահ Քերեմ Հասանովը, հարկերի նախարարն ու նախարարության որոշ աշխատակիցներ, մասային ծառայության պետ Այդընը Ալիեւը, նրա տեղակալները, Բաքվի գործադիր իշխանության ղեկավար Հաջիբալա Աբութալիբովը, մետրոպոլիտենի պետ Թաղը Ահմեդովը, «Ազերէներջի»-ի նախագահ Էթիբար Փիրվերդիեւը, «Ազալ»-ի ղեկավար Ջահանգիր Ասկերովը, կասպյան նավագնացության վարչության պետ Այդընը Բեշիրովը, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Ալի Աբբասովը, Ադրբեջանի պետական նավթային ընկերության (SOCAR) ձեւական նախագահ Ռովնագ Աբդուլաեւը, «Ադրբեջանի երկաթուղիներ»-ի ղեկավար Արիֆ Ասֆերովը եւ «Ազերսու»-ի նախագահ Նիզամեդդին Ռզաեւը»: Թե ինչի՞ համար են Իլհամ Ալիեւին պետք այս «քավության նոխազները», կարծում ենք, դժվար չէ կռահել: Ադրբեջանի առաջնորդը խնդիր ունի կասեցնելու ժողովրդի դժգոհության ալիքը, որը վերջին՝ «արաբական» դեպքերից ու իսլամիստների եւ հիշաբի նկատմամբ իշխանությունների գործողություններից հետո, կարող է ահագնանալ: Ադրբեջանցի որոշ փորձագետներ անգամ չեն բացառում, որ «Թունիս-Եգիպտոս» շղթայի հաջորդ կետը Ադրբեջանն է: Ամենեւին պատահական չէ, որ հենց այս օրերին Իլհամ Ալիեւի վարչակազմը ձերբակալեց ընդդիմադիր հիմնական քաղաքական ուժերի առաջնորդներին ու ներկայացուցիչներին: Հիշեցնենք՝ հունվարի 7-ին «զենք եւ զինամթերք ապօրինի պահելու» մեղադրանքով ձերբակալվեց Իսլամիստական կուսակցության նախագահը, որը հայր Ալիեւի մերձավորագույն ընկերն էր, Բաքվի հայկական ջարդերի կազմակերպիչներից Փանահովը: Բացի սրանից, ինչպես տեղեկանում ենք Pia.az կայքից, «Ադրբեջանի իշխանության մեջ գտնվող նախիջեւանյան կլանը թիրախ է դարձրել «Մուսաֆաթ» կուսակցությանը: Կուսակցության որոշ անդամների կալանում են, եւ նրանք հեռանում են կուսակցությունից»: Դժվար է ասել, թե այս կալառքի դեպքերը արձանագրվե՞լ են արդյոք Ադրբեջանի «Կոռուպցիայի դեմ պայքարի կոմիտեի» ընդլայնված կազմով նիստում, սակայն հասկանալի է, թե Իլհամ Ալիեւն ու «մյուսները» ինչու են հանկարծ որոշել հենց հիմա «կտրուկ քայլեր» ձեռնարկել կոռուպցիայի դեմ: Ջեռի հետ ազատվելով անցանկալի պաշտոնյաներից՝ Ալիեւը ստեղծում է պատրանք, որ իբր իշխանություններն ամեն ինչ անում են ժողովրդի վիճակը բարելավելու համար, որ «բոլոր մեղավորները պատժվում են», սակայն իրականում՝ Ադրբեջանում «արաբական հեղափոխությունն» արմատախիլ է արվում դեռ չսկսված:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

«Վիքիլիկսի» բացահայտումները ծառայեցին նպատակին

1-ին էջից

Թունիսի օրինակով սկսեցին հակակառավարական ցույցեր ծավալվել Ալժիրում, Հորդանանում, Մավրիտանիայում, Եմենում, Սուդանում եւ Եգիպտոսում: Ցուցարարները Հորդանանում կառավարության, մյուս երկրներում՝ նախագահի հրաժարականն են պահանջում: Ինչ վերաբերում է Եգիպտոսին, ապա այնտեղ, բացի հրաժարականի պահանջից, նախագահ Հոսնի Մուբարաքին համարում են ամերիկյան գործակալ եւ «ինքնաթիռը քեզ է սպասում» կարգախոսով սիրողում են նրան, որ հեռանա երկրից: Ըստ երեւույթին, ցուցարարները վճռական են, որ նախորդ օրը մինչ եգիպտական կառավարությունը հրաժարական էր տալիս, նրանք երդվում էին ցույցերը շարունակել մինչեւ Մուբարաքի տապալումը:

Դեռեւս վաղ է ցույցերի ընթացքը կանխորոշել: Պարզապես օրեցօր մեծանում է Մուբարաքի տապալման հավանականությունը, որը խուճապի է մատնել արաբական մյուս երկրների ղեկավարներին, իսկ ցույցերը դարձել են մտահոգության պատճառ ԱՄՆ-ում, Եվրոմիությունում եւ հատկապես Իսրայելում: Դա պայմանավորված է արաբական աշխարհում Եգիպտոսի ծանրակշիռ դիրքով, ԱՄՆ-ի մերձավորարեւելյան քաղաքականության մեջ առանցքային դերով, ինչպես նաեւ Իսրայելի ազգային անվտանգության համար ստանձնած պատասխանատվությամբ:

Թերեւս այս ամենի առումով պատահական չէր Բարաք Օբամայի եւ Հոսնի Մուբարաքի վերջին հեռախոսազրույցը, որի ընթացքում ԱՄՆ-ի նախագահն ընդգծել է. «Կառավարությունը պետք է պահպանի իշխանությունը ոչ թե բռնությամբ, այլ համաձայնությամբ: Դաժանությամբ հնարավոր չէ լուծել եգիպտական ժողովրդի խնդիրները: Եգիպտացիներն իրենք պետք է որոշեն իրենց ապագան»:

Օբամային լրացրել էր պետքարտուղար Հիլարի Քլինթոնը, հայտարարելով. «Մենք Եգիպտոսում չենք ուզում տեսնել այնպիսի զարգացումներ, որոնք երկիրը կտանեն ոչ թե ժողովրդավարացման հունով, այլ ճանապարհ կհարթեն բռնատիրական նոր վարչակարգերի իշխանության համար»: Բռնատիրական վարչակարգերի պարագայում տկն Քլինթոնի ակնարկն իսլամ արմատականների մասին է, որոնք Եգիպտոսում կարող են իշխանության գալ, եթե հակակառավարական ցույցերը վերածվեն համաժողովրդական շարժման:

Ակնհայտ է, որ ցուցարարների դեմ ուժի գործադրումը կնպաստի դրան: Որպեսզի դա տեղի չունենա, Օբաման նախազգուշացրել է Մուբարաքին, իսկ եգիպտական բանակը հակառակ վերջինի «հակակառավարական խռովությանը միջամտելու կարգադրությանը», հրաժարվել է զենք գործադրել ցուցարարների դեմ:

Այլ կերպ, բանակը հետամուտ է եղել Օբամայի հորդորներին՝ անտեսելով Մուբարաքի կարգադրությունը: Հատկանշական է, որ սկսած 1979-ից եգիպտական բանակին տարեկան 1 մլրդ 300 մլն դոլար օգնություն տրամադրելող ԱՄՆ-ն, որը երկրի տնտեսության պարագայում կազմում է ընդամենը 250 մլն դոլար, նախքան Մուբարաքի հետ Օբամայի հեռախոսազրույցը, վերանայել էր օգնության տրամադրման որոշումը: Կատարել Մուբարաքի կարգադրությունը՝ բանակի համար կնշանակեր առհասարակ զրկվել օգնությունից:

Փաստորեն որոշումը վերանայելու միջոցով ԱՄՆ-ը երկրում բանակի վրա հենվող Մուբարաքին նախապես զրկել էր գլխավոր հենարանի աջակցությունից, որ Եգիպտոսը հանկարծ վերջինի համառության պատճառով չդառնա համաժողովրդական շարժման թատերաբեմ: Ինչ վերաբերում է հակակառավարական ցույցերին, ապա դրանք էլ պետք է լինեն կառավարելի: Ինչպե՞ս: Ցուցարարների հակակառավարական ելույթները համատարած կողոպուտի հետ համադրելով, ինչը տեղի է ունենում Եգիպտոսում այն ատիճանի, որ Կահիրեի բնակիչները սեփական բնակարանը կողոպտիչներից պաշտպանվելու համար մահակներով, կացիններով պահակ են կանգնում սեփական բնակարանների առջեւ:

Ակնհայտ է, որ բնակարանը կողոպուտի սպառնալիքի տակ գտնվող բնակիչները չեն կարող ցույցերին մասնակցել: Դրանով կսահմանափակվի ցուցարարների թիվը: Այսպիսով նրանք ոչ միայն կդառնան վերահսկելի, այլեւ համատարած կողոպուտի պայմաններում նաեւ կվարկաբեկվեն: Դրանով զգալի կդյուրանա Եգիպտոսի նոր իշխանությունը սեփական նախաձեռնությամբ ձեւավորելու Վաշինգտոնի առաջադրանքը: Այսպիսով, կապահովվի ինչպես պաշտոնական Կահիրեի որդեգրած դիրքորոշման, այնպես էլ եգիպտական քաղաքականության շարունակականությունը:

«Վիքիլիկսի» բացահայտումները վարկաբեկեցին տարածաշրջանի երկրների ղեկավարներին: Դրանով սկսվեցին հակակառավարական ցույցերի նախադրյալները: Հիմա արդեն անկանխատեսելի հետեւանքներից խուսափելու համար Վաշինգտոնը տարածաշրջանի երկրների ղեկավարներին ոչ միայն չի աջակցում, այլեւ հենարանից է զրկում, որպեսզի համատարած կողոպուտով վարկաբեկված ցուցարարներին վերահսկելու միջոցով բացառի ցույցերի վերածումը համաժողովրդական շարժման:

Համենայն դեպս, «Վիքիլիկսի» բացահայտումները ծառայել են նպատակին: Թվում է, թե կծառայի նաեւ ցույցերի վերահսկողությունը: Թեեւ տարածաշրջանում կտապալվեն գործող վարչակարգերը՝ իրենց առաջնորդների հետ, սակայն կապահովվի տարածաշրջանային երկրների ամերիկյան վերահսկողությունն ու քաղաքականության շարունակականությունը: Ինչպես երեւում է դեռեւս 90-ականներին առաջ քաշված «Մեծ Մերձավոր Արեւելք» ծրագրի իրականացումը Վաշինգտոնը պայմանավորում է բռնատիրական վարչակարգերի տապալմամբ:

ՅԱՎԱԿՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր
Ռաֆիկ Աբգարյանի
մահվան կապակցությամբ «Գերագույն խորհուրդ» նախկին պատգամավորների ակումբի նախագահությունը ցավակցություններ է հայտնում հանգուցյալի հարազատներին ու բարեկամներին:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ եղինկային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

Անցուդարձ

Կվերաբաժանվի՞ արդյոք աշխարհը

Ռուսաստանում ստեղծվել է Սեւծովյան եւ կասպյան տարածաշրջանի քաղաքական եւ տնտեսական հետազոտությունների ինստիտուտ: Իրադարձությունն ինքնին շարքային է, սակայն ինստիտուտի տնօրեն, «մի շարք հայերեն բառեր իմացող» **Վլադիմիր Զախարովի** գործոնն արդեն բավական հասկանալի է՝ մանավանդ հաշվի առնելով, որ կոնկրետ Ռուսաստանում ամիսը մեկ-երկու ադրբեջանցի հեղինակների «հետազոտական աշխատություն» է հրատարակվում Ղարաբաղի ու այսպես կոչված «Կովկասի իրական պատմության մասին»: Երեկ ասուլիս հրավիրած Զախարովը նշեց, որ Ռոստով եւ Պյատիգորսկ քաղաքներում մասնագիտացված մասնաճյուղեր ունեցող իրենց ինստիտուտում այսօր արդեն կան բազմաթիվ տպագրելու ենթակա գրքեր, որոնք սակայն կարիք ունեն ֆինանսավորման՝ հրատարակվելու համար: «Ինձ համար զարմանալի է հայ գործարարների անտարբերությունը այս հարցում, մենք ինքներս ենք նրանց դիմում ու սանում ընդհանուր առմամբ այսպիսի պատասխան՝ փող չկա, զարմանալի է», ասաց Զախարովը: Սակայն, անկախ հայ գործարարների անտարբերությունից՝ Զախարովի գլխավորած ինստիտուտը անցկացրել է մի շարք տարածաշրջանային ուսումնասիրություններ եւ հետազոտություններ, որոնց մի մասը երեկ ներկայացվեց: Մասնավորապես, ըստ Զախարովի, տարածաշրջանում դեռեւս պահպանվում է ԱՄՆ-ի՝ Իրանի վրա հարձակվելու վտանգը. «Այս ծրագիրն արդեն շուրջ 12 տարի լրջորեն մշակվում է Վաշինգտոնում», նշեց բանախոսը՝ հավելելով, որ Վաշինգտոնում մշակվում է «մի շաս ավելի հետաքրքրական ծրագիր»: Վերջինս կարող է անմիջականորեն վերաբերել ինչպես Ղարաբաղին, այնպես էլ Արեւմտյան Հայաստանին: Այսպես, ըստ Զախարովի, ճանաչելով Կոսովոն՝ ԱՄՆ-ը հող նախապատրաստեց այլ պետությունների ճանաչման համար՝ ՄԱԿ-ի լուռ համաձայնությամբ: «Այդ երկրներից մեկը պետք է լիներ Քուրդիստանը, ու ամենեւին պատահական չէ, որ Կոսովոյի իրադարձություններից հետո որոշակի լարվածություն զգացվեց թուրք-ամերիկյան հարաբերություններում», ասաց Զախարովը: Հենց այս պատճառով էլ, թերեւս, Թուրքիան, անակնկալի գալով նախկին զինակցի «դավաճանությունից», «ոտքի ելավ»՝ ցույց տալով, թե ով է Կովկասում «իրական տերը», մշակելով ու ներկայացնելով իր «Կովկասյան պլատֆորմը». «Հանդիպելով Անկարայի համառ դիմադրությանը՝ Վաշինգտոնը «հետաձգեց» Քուրդիստան-նախագիծը ու ձեռնամուխ եղավ այլ, հիմնականում աֆրիկա-արաբական երկրներում պառակտում մտցնելուն եւ Հարավային Սուդանին փաստորեն անկախություն տալուն: Այս բոլոր իրադարձությունները հենց ամերիկյան ծրագրի շրջայից են», եզրակացրեց Զախարովը: Ընդհանուր առմամբ, ընդգծելով, որ ներկա իրադարձությունները ցույց են տալիս, որ առաջիկա 5-7 տարիների ընթացքում աշխարհում կառաջանան նոր պետություններ, բանախոսը նշեց. «ԱՄՆ-ի հիմնական նպատակն է չեզոքացնել Երկրորդ համաշխարհայինից հետո կնքված Յալթա-Պոտսդամյան համաձայնագիրը՝ իրականացնելով աշխարհում ազդեցության գոտիների վերաբաժանում»: Այս համայնապատկերում, սակայն, Զախարովը առաջիկա տարիների ընթացքում Ղարաբաղի համար լուրջ փոփոխություն չի տեսնում. նախ, որովհետեւ հիմնահարցի լուծման գործընթացի մասնակիցներ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին «լուրջ չի վերաբերվում»՝ համարելով վերջիններիս «մեկ այս, մեկ այլ երկիր գնացողներ», ապա նաեւ. «Կարծում եմ, չնայած պատերազմ սկսելու հայտարարություններին, Ալիեւը այդ քայլին չի դիմի, քանի որ ինքն էլ շաս լավ հասկանում է, որ այդ պարագայում միջազգային հանրությունը Ադրբեջանին կընկալի որպես ագրեսորի, ինչն հատատապես Ալիեւը չէր ուզենա», ասաց Զախարովը: Բացի դրանից՝ պակաս կարեւոր չեն այլ գործոններ եւս, մասնավորապես՝ հարեւան ու ծանրակշիռ Իրանը բազմիցս է հայտարարել, որ ինքը հիմնահարցի լուծումը տեսնում է բացառապես խաղաղ բանակցությունների միջոցով ձեռք բերված պայմանավորվածությունների տեսքով, իսկ Թեհրանը, բնականաբար, չի ուզենա անմիջապես իր սահմանների մոտ անկանխատեսելի հետեւանքներով նոր պատերազմ, մանավանդ որ այնտեղ հավանականությունը մեծ է, խառնված կլինեն այլ շահագրգիռ ուժեր եւս, այդ թվում՝ «օվկիանոսից այն կողմ գտնվողներից»: «Վաշինգտոնը իր հերթին, դիվանագիտական խողովակներով, ակնարկներով, բազմիցս է զգուշացրել Բաքվին, որ եթե վերջինս պատերազմ սկսի, ինքը կճանաչի Ղարաբաղի անկախությունը», ասաց Զախարովը: Ինչ վերաբերում է «մեկ այլ շահագրգիռ» Ռուսաստանին, ապա, բանախոսի համոզմամբ, Ռուսաստանը չի կարող անմասն մնալ «անցանկալի» պատերազմից, եթե Բաքուն որոշի այն սկսել, քանի որ. «Ադրբեջանն ինքն իրեն գցել է փակուղի. Հայաստանը ՌԴ դաշնակիցն է ՀԱՊԿ-ում, մի կազմակերպություն, որի անդամներից մեկի վրա հարձակումը համարվում է հարձակում բոլոր անդամների վրա: Իսկ Բաքուն այսօր հակամարտող դիմացի կողմ է ճանաչում բացառապես Երեւանին, այլ ոչ՝ Ստեփանակերտին, իսկ սա նշանակում է, որ հավանական պատերազմը հենց Հայաստանի դեմ է», նկատեց փորձագետը:

Վերջում Զախարովը խոսեց կոնկրետ Հայաստանի ուղղությամբ վարվող ռուսական եւ ամերիկյան քաղաքականությունից: Նա մասնավորապես պատահական չի համարում հատկապես Մարի Յովանովիչի նշանակումը Երեւանում ԱՄՆ դեսպան. «Միգուցե Յովանովիչը լավ կին է, բայց չմոռանաք, որ նա ունի ռազմական կրթություն եւ կոչում, նա ռազմական փորձագետ է եւ ԱՄՆ-ի դեսպանն էր Ղրղզստանում հենց այն ժամանակահատվածում, երբ այդ երկրում իրականացվեց «վարդակակաչների հեղափոխությունը», ընդգծեց Զախարովը: Այս առումով, ըստ բանախոսի, Մոսկվան «մտածելու լուրջ տեղ ունի. Ռուսաստանը պետք է հասկանա, որ Հայաստանում ամեն ինչ չէ, որ միանշանակ է: Ժամանակն է, որ Մոսկվան հստակ ու լուրջ քաղաքականություն մշակի Հայաստանի մասով», եզրակացրեց Վլադիմիր Զախարովը:

Հ. ԱՓՅԱՆ

ԲՈՅԿՈՏ, ԹԵՏ...

Մեկնած գնացքի հետեւից

1-ին էջից

Լրագրողի հարցին պատասխանելիս՝ Դ. Հարությունյանը հնարավոր չհամարեց առհասարակ Հայաստանի պատվիրակության՝ ԵԽԽՎ-ի աշխատանքին չմասնակցելը Զավուշօղլուի նախագահության որոշ, վերջինիս կողմնակալության պատճառով: ԼՂՀ-ն կարո՞ղ է ինչ որ կերպ ներկայացված լինել ենթահանձնաժողովում, ինչպես ԼՂՀ նախկին փոխարտգործնախարար Մասիս Մայիլյանն է ասում, թե՞ դա պետք է առաջարկի մեր պատվիրակությունը, մերժման դեպքում միայն բոյկոտելով ենթահանձնաժողովի աշխատանքը:

Բայց ենթահանձնաժողովի կազմում Ղարաբաղի պատվիրակներին ներառելը ֆորմալ արգելք ունի՝ պատվիրակները չեն ներկայացնում վեհաժողովը, նախկինում էլ մեր պատվիրակությունը բարձրաձայնել է խնդիրը, որ Ղարաբաղի իշխանությունները ներկայացված լինեն ենթարկումներին՝ հավասարապես հավասարաչափակով: Ենթահանձնաժողովը ստեղծվել է 2005-ին, 1416 բանաձեւով, հայկական պատվիրակությունը տարիներ աշխատել է ենթահանձնաժողովի աշխատանքի վերսկսումը բացառելու համար, բայց միայն Զավուշօղլուի նախագահելու ընթացքում հնարավոր չեղավ խանգարել ԼՂ կարգավորման գործընթացին խանգարող այդ ենթահանձնաժողովի վերստեղծմանը: Նարիա Զոհրաբյանից հետաքրքրվեցինք՝ մեր պատվիրակությունը կարո՞ղ էր ավելի լավ աշխատել, ինչ-որ չօգտագործված ռեսուրս մնացե՞լ է. «Ո՛չ, մեր պատվիրակությունը արել է հնարավորը, մեզ համար միանշանակ ակնհայտ էր, որ Թուրքիան իր երկնախագահության այս փուլը (նախարարների կոմիտեում թուրք նախարար, Վեհաժողովում թուրք նախագահ), անողայմանորեն փորձելու է օգտագործել դե յուրե՝ 2005 թվականից գործող հանձնաժողովը վերակենդանացնելու համար, բայց ես ամեն դեպքում այստեղ ողբերգություն չեմ տեսնում, մենք մեր բաց նամակում ասել ենք, որ հայկական պատվիրակությունը նպատակահարմար չի գտնում անարդյունավետ վարժանքների մասնակցելը»: Նա նշեց, որ հանդիպել են ԵԽԽՎ բյուրոյի բոլոր անդամների հետ, անկախ նամակը փոխանցելուց, բացատրել, որ Մինսկի խմբի ֆորմատից բացի՝ այլ ֆորմատ անթույլատրելի է ԼՂ հարցում, անթույլատրելի է նաեւ սկզբունքներից որեւէ մեկը տարանջատելը. «Ինձ համար առնվազն տարօրինակ է Ֆրանսիայի ներկայացուցչի պահվածքը...»:

Դ. Հարությունյանն էլ նկատեց, թե քվեարկություն որպես այդպիսին չի եղել, եթե լիներ՝ բազմաթիվ «դեմեր» կլինեին եւ դրանով է պայմանավորված, որ կոծված ձեւով ամեն ինչ արվեց, իսկ առանձին հարցը չի քվեարկվել. «Ամենաողջամիտ լուծումը կլիներ այս փուլում հարցի սառեցումը, ինչպես որ իրականացվել է տարիներ շարունակ, մինչեւ ավելի ողջամիտ լուծման գալը», պնդեց նա՝ ի պատասխան մեր դիտարկմանը, թե մեծ պետությունների ներկայացուցիչների ռեսուրսը գուցե մինչեւ վերջ չի օգտագործվել, բայց եւ հավելեց. «Ցավոք՝ Ռուսաստանի ներկայացուցիչը բյուրոյի նիստին ներկա չէր, իսկ նա սկզբունքորեն համանախագահող երկիր է ներկայացնում, Ֆրանսիացի պատգամավորը կամ Ֆրանսիայի պատվիրակության ղեկավարը մինչ այդ թեեւ արտահայտել էր իր դիրքորոշումը, որ չպետք է խոչընդոտել Մինսկի խմբի աշխատանքին, սակայն նա եւս ձայն չվերցրեց»: Ն. Զոհրաբյանն էլ մեզ հետ զրույցում մանրամասնեց, որ Մինսկի խմբի համանախագահող երկիր Ֆրանսիայի ներկայացուցիչ, բյուրոյի անդամ Ժան Կլոդ Մինյոնի հետ ինքն է բյուրոյի նիստից մեկ օր առաջ զրուցել, Մինյոնը կիսել է հայկական պատվիրակության տեսակետը, ասել, որ բյուրոյում այդ մասին կբարձրաձայնի, բայց զարմանալիորեն բյուրոյի նիստում լռել է: Ն. Զոհրաբյանը, որպես ԱԺ Եվրոինտեգրացիայի հանձնաժողովի նախագահ, պատրաստվում է նամակով դիմել ֆրանսիացի համանախագահին՝ պարզելու, թե միջազգային այս կառույցում ներկայացված իր երկրի ներկայացուցիչները ո՞ր երկրի շահերն են պաշտպանում. «Մինյոնն իր լռությամբ միանշանակ չէր արտահայտում համանախագահող Ֆրանսիայի տեսակետն ու դիրքորոշումը», ասաց նա: Իսկ Զավուշօղլուն, ըստ Զոհրաբյանի, մեկ նպատակ է հետապնդում այս հանձնաժողովի վերստեղծմամբ՝ ունենալ հակահայ բանաձեւ, եւ քանի որ, ի տարբերություն Եվրոպառլամենտի, ԵԽԽՎ-ի բանաձեւերը կատարման համար պարտադիր են:

Հասկանալի է, բայց գնացքն արդեն գնացել է, եւ նրան կայարանից դուրս կանգնեցնելու մեր փորձերը հազիվ թե արդյունավետ լինեն՝ կմնա բոյկոտը:

Հրաժարվեք Ալավերդիում եւ Ախթալայում աճեցված գյուղմթերքից

Գրանցում ծանր մետաղների պարունակությունը գերազանցում է թույլատրելին

2010-ից ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտություններ կենտրոնը ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ֆինանսավորմամբ իրականացնում է CASE (ՔԳԱՇՄ՝ Քաղաքացիական գործողություններ հանուն անվտանգության եւ շրջակա միջավայրի) նախագիծ, որի նպատակն է իրականացնել ոչ միայն շրջակա միջավայրի աղտոտվածության վերաբերյալ հետազոտություն, այլեւ իրազեկել բնակչությանը:

Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի շրջակա միջավայրի երկրաքիմիայի լաբորատորիայի վարիչ **Լիլիթ Սահակյանի** ներկայացմամբ՝ ծրագրի շրջանակներում Հայաստանի գյուղմթերքի ծանր մետաղներով աղտոտման ռիսկն են գնահատում:

Մասնագետները շուրջ մեկ տարի հետազոտություն են իրականացրել հանքարդյունաբերական կենտրոններ համարվող Ախթալա եւ Ալավերդի քաղաքներում ու հարակից Նեղուց եւ Քորկոփ գյուղերում:

Հետազոտությունն անցկացվել է երեք փուլով: Նախ ուսումնասիրել են Դեբեդ գետի ջուրը, այնուհետեւ հետազոտել այդ ջրով ոռոգվող հողն ու գյուղմթերքը:

Հետազոտված ջրերում հայտնաբերված ծանր մետաղների պարունակությունները չեն գերազանցել թույլատրելիին, սակայն էկոլոգը ուշադրություն է հրավիրում այն փաստին, որ գյուղատնտեսական հողերը տարիներ շարունակ ոռոգվում են նույն ջրով, իսկ հողը ծանր մետաղներ կուտակելու հատկություն ունի:

Հողերի հետազոտման ժամանակ գրանցվել են աղտոտում եւ որոշ ծանր մետաղների պարունակության սահմանային թույլատրելի արժեքների գերազանցում: «Հետազոտված հողատարածքների հողերում պղնձի, ցինկի, արսենի պարունակությունները մի քանի անգամ գերազանցում են նորման: Արսենիումը առաջին դասի տոքսիկության տարր է: Հողերում հայտնաբերվել են նաեւ նիկել, կադմիում եւ սնդիկ, սակայն դրանց պարունակությունները չեն գերազանցում նորման», «**Ազգ**»-ի հետ զրույցում ասաց Լիլիթ Սահակյանը:

Երրորդ փուլում մասնագետները հետազոտել են Ալավերդու եւ Ախթալայի մոտակա գյուղերում աճող գյուղմթերքը: Հետազոտվել են ազնվամորին, թուզը, սեւ եւ սպիտակ թութը, բալը, խաղողը, կարտոֆիլը, սոխը, եգիպտացորենը, լոբին, մաղդանոսը, համեմը, նեխուրը, որոնցում հայտնաբերվել են ծանր մետաղներ՝ որոշ դեպքերում մի քանի անգամ նորմայի գերազանցում:

«Կանաչեղենն ու հատապտուղները ավելի են հակված կլանելու ծանր մետաղները: Հետազոտությունները ցույց տվեցին, որ առավել քանակությամբ ծանր մետաղներ են կուտակել ազնվամորին, թուզը, նեխուրն ու եգիպտացորենը», նշեց Լիլիթ Սահակյանը:

Այժմ կենտրոնի աշխատակիցները պատրաստում են տեղեկատվական բուկլետներ, որոնք պետք է տարածեն տեղի բնակչությանը: Նպատակն է՝ բնակչությանը ներկայացնել հետազոտության արդյունքները ու իրազեկել նրանց: Թեպետ Լիլիթ Սահակյանը փաստում է, որ բնակիչների իրազեկվածությունը շատ կարեւոր է, որպեսզի նրանք իմանան ինչ են ուտում, եւ իրենք էլ նախազգուշական միջոցառումներ ձեռնարկեն, սակայն միանշանակ փաստում է, որ հնարավոր չէ գյուղացուն արգելել չուտել կարտոֆիլ կամ լոբի:

«Ցավոք, բնապահպանական խնդիրները Հայաստանում միշտ հանգեցնում են սոցիալական խնդիրների: Գյուղացուն չես կարող արգելել, որ իր աճեցրած բերքը շուկայում չվաճառի ու չուտի: Չէ՞ որ նա այդպես է պահում իր ընտանիքը, մյուս կողմից՝ պետությունը հարուստ չէ, որ բազմաթիվ երկրների օրինակով աղտոտված հողերը, այսպես կոչված, լվանա», նշում է Սահակյանը՝ փաստելով, որ կան նաեւ հողերի մաքրման քիչ ծախսատար մեթոդներ, որոնք կարող են նվազեցնել վտանգը:

«Այդ ուղղությամբ աշխատում ենք, միջազգային գործընկերների միջոցով փորձում գտնել առավել մատչելի տարբերակ: Այդ տարբերակներից մեկն էլ այն է, որ եղած ծանր մետաղները պահվեն հողում եւ բույսերի համար մատչելի չլինեն: Սակայն միայն դա բավարար չէ: Հողը մաքրելուց հետո պետք է հեռացնել ջրի մաքրությանը, որպեսզի նորից աղտոտիչները չթափանցեն հող, այնուհետեւ՝ մարդու օրգանիզմ», ասաց Սահակյանը:

ՀԱՍՄԻԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հեղափոխական պրոֆեսորը. Գուրգեն Մելիքյան

Պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանը Երեւանի Պետհամալսարանի արեւելագիտության ֆակուլտետի դեկանն է, Ղարաբաղյան շարժման մասնակիցներից: Նրա աշխատասենյակի հնօրյա հեռախոսի զնգոցը խլացնում է դասամիջոցներին միջանցքում տիրող աղմուկը: Աշխատասենյակը զարդարված է բույսերով, պարսկերեն աշխատություններով, Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի քարտեզներով: Ուսումնական նոր տարվա սկիզբը ծանրաբեռնված է: Գուրգեն Մելիքյանը կրում է ուղղակի Տարոնի դաշտերից եկած ֆիդայու սպիտակ բեղեր:

Նա ծնվել է 1936-ին Իրանի Աբադան քաղաքում: Դա խորհրդանշական տարի է հեղափոխականի համար: Վաղ հասակից հարել է «Թուդեհ» կոմունիստական կուսակցությանը, մասնակցելով ճնշվածների հակաֆեոդալական պայքարին: 1958-ից հաստատվել է Խորհրդային Հայաստանում, զբաղվելով գիտական աշխատանքով, պարսկերեն դասավանդելով Երեւանի Պետհամալսարանի արեւելագիտության ֆակուլտետում, ապա դառնալով այդ ֆակուլտետի դեկանը:

1985-ին նա բացահայտում է Ղարաբաղի բնությունը եւ մարդկանց: «Անմիջապես սիրահարվեցի այդ ժողովրդին, իր ավանդույթներին ու հպարտությանը: Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը կարողացել է պահպանել պետական ավանդույթը. դա պարսկական տիրապետության դեմ պայքարած մելիքների հերոսամարտի ժառանգությունն է»: Մինչ Արցախի լեռներում զինվորական ճտիակոշիկների ձայներ են լսվում, մտավորականները հավաքում են ժողովրդի գանգատները, պահանջում Ղարաբաղի միացումը Հայաստանին: «Ղարաբաղյան շարժումն ունեցավ վերելքներ եւ վայրէջքներ», մտախոհ վերհիշում է պրոֆեսոր Մելիքյանը: 1988-ի աշնանը նախաձեռնում է Երեւանի կենտրոնում հավաքել հնարավորինս մեծ թվով ուսանողներ: Այնտեղ ներկա էր դերասանուհի Ժաննա Գալստանը: Առաջին նստացույցերը ասիճանաբար լայն տարածում գտան: «Մենք կազմակերպում էինք մարդասիրական օգնության առաջին առաքումները Արցախի մեր եղբայրներին ու քույրերին», պատմում է Մելիքյանը:

«Հետո եղան առաջին զոհերը: Խելահեղ տարիներ էին: Աննախադեպ խանդավառություն եւ մարություն էին տիրում մեր շարքերում: Ամեն ինչ հաստատվում էր Արցախին... Մենք մարտնչում էինք բոլոր ճակատներում: Մեր գործունեությանն օժանդակում էր «Ամարաս» ոչ կառավարական կազմակերպությունը: Մեզ միացան կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանը եւ այլ արվեստագետներ: Ուղարկում էինք հագուստ, ռազմահանդերձանք, զենք: Մեր մարտիկների անձնազոհությունը մեզ ոգեւորում էր: Հանուն մեր հողերի ազատագրման մարտնչելով՝ մենք ասես մարում էինք անցյալի բծերը եւ սխալները», պատմում է պրոֆեսորը:

Գեներալ Սամվել Բաբայանի հրամանատարությամբ կռված Գուրգեն Մելիքյանը 1992-ին նշանակվում է ԼՂՀ պաշտպանության նախարարի տարածքում գտնվող ժամանակներում նա ունենում է մի վճռորոշ հանդիպում: «1991-ի հոկտեմբերին ծանոթացա Մոնթե Մելքոնյանի հետ: Նա նոր էր եկել Հայաստան եւ պատրաստվում էր մարտնչել Շահումյանի ճակատում: Կանոնավորապես տեսնվում էինք: Նա Մարտունու շրջանի զինվորական պատասխանատուն էր: Ես նրան օգնեցի ռադիոսարքավորումներով եւ այլ հանդերձանքով»: Մոնթե Մելքոնյանի լուսանկարը փակցված է պատին, Հայաստանի եւ Արցախի քարտեզի վերեւում: «Հարկ է ընդգծել, որ մենք առավելություն ունեինք թշնամու նկատմամբ. մեր ռադիոհաղորդակցություններն անհամեմատ լավն էին, մենք հաճախականություն էինք փոխում ամեն օր, ամեն ժամ»:

Մոնթեն սպանվեց 1993-ի հունիսին: Պատմում է Գուրգեն Մելիքյանը. «Ես նրա մարմինը հասցրի Երեւան: Ղարաբաղցիներն ուզում էին անպայման իրենց մոտ պահել: Այնտեղ ամեն օջախում՝ պատի վրա կարելի է տեսնել նրա լուսանկարը: Մոնթեն մեր սրբության, մեր պայքարի անաղարտության ֆակուլտետում, ապա դառնալով այդ ֆակուլտետի դեկանը:



1985-ին նա բացահայտում է Ղարաբաղի բնությունը եւ մարդկանց: «Անմիջապես սիրահարվեցի այդ ժողովրդին, իր ավանդույթներին ու հպարտությանը: Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը կարողացել է պահպանել պետական ավանդույթը. դա պարսկական տիրապետության դեմ պայքարած մելիքների հերոսամարտի ժառանգությունն է»: Մինչ Արցախի լեռներում զինվորական ճտիակոշիկների ձայներ են լսվում, մտավորականները հավաքում են ժողովրդի գանգատները, պահանջում Ղարաբաղի միացումը Հայաստանին: «Ղարաբաղյան շարժումն ունեցավ վերելքներ եւ վայրէջքներ», մտախոհ վերհիշում է պրոֆեսոր Մելիքյանը: 1988-ի աշնանը նախաձեռնում է Երեւանի կենտրոնում հավաքել հնարավորինս մեծ թվով ուսանողներ: Այնտեղ ներկա էր դերասանուհի Ժաննա Գալստանը: Առաջին նստացույցերը ասիճանաբար լայն տարածում գտան: «Մենք կազմակերպում էինք մարդասիրական օգնության առաջին առաքումները Արցախի մեր եղբայրներին ու քույրերին», պատմում է Մելիքյանը:

«Հետո եղան առաջին զոհերը: Խելահեղ տարիներ էին: Աննախադեպ խանդավառություն եւ մարություն էին տիրում մեր շարքերում: Ամեն ինչ հաստատվում էր Արցախին... Մենք մարտնչում էինք բոլոր ճակատներում: Մեր գործունեությանն օժանդակում էր «Ամարաս» ոչ կառավարական կազմակերպությունը: Մեզ միացան կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանը եւ այլ արվեստագետներ: Ուղարկում էինք հագուստ, ռազմահանդերձանք, զենք: Մեր մարտիկների անձնազոհությունը մեզ ոգեւորում էր: Հանուն մեր հողերի ազատագրման մարտնչելով՝ մենք ասես մարում էինք անցյալի բծերը եւ սխալները», պատմում է պրոֆեսորը:

Գեներալ Սամվել Բաբայանի հրամանատարությամբ կռված Գուրգեն Մելիքյանը 1992-ին նշանակվում է ԼՂՀ պաշտպանության նախարարի տարածքում գտնվող համալսարանական դասախոսը բազմիցս ճամփորդում է սփյուռքում, մանավանդ ԱՄՆ-ում: Նա մարդասիրական օգնություն է հայթայթում Արցախի մարտիկների եւ խաղաղ բնակչության համար: «Մենք պետք է խաչ քաշենք անցյալի սխալների վրա: Նախագահ Բակո Սահակյանը մեկն է նրանցից, ովքեր դժգոհ են, որ մեր նախնիները շատ հաճախ հողեր են զիջել թշնամուն: Բացի դրանից, Շահումյանն ու Գեղարքունին մնում են թուրքերի ձեռքին»:

Մարդասիրական ճակատ

Քաջաթաղի բազմանդամ ընտանիքներին օգնելու նպատակով 1996-ին ստեղծված «Գուրգեն Մելիքյան» հիմնադրամը հետզհետե ավելի մեծ ուշադրության է արժանանում սփյուռքում: «Բերձորի (Լաչին) ազատագրումից հետո մենք գործունեություն ծավալեցինք այդ տարածքի վերաբնակեցման նպատակով: Շրջանի հայերից ոմանք այնտեղ հաստատվեցին: Մենք նրանց տվեցինք դրամ, պարուսի միջոցներ: Ջորու երեխա ունեցող ընտանիքներին տալիս ենք մեկ կով, վեց երեխա ունեցողներին՝ երկու կով, որ գնում ենք Շուկայում», ասում է Մելիքյանը եւ ավելացնում. «Մենք գործում ենք թափանցիկորեն, առանց միջնորդների: Օգնությունը խնամքով ընտրվում է: Հիմնադրամն օժանդակում է դպրոցական, բուհական դասագրքերի հրատարակմանը, Ղարաբաղի եւ Հայաստանի ուսանողներին կրթաթոշակների վճարմանը: Մենք ձեռք ենք բերում գիտական գրքեր եւ դրանք անվճար տարածում Արցախի գրադարաններում: Կառուցել ենք դպրոց, պայքարում ենք երեխաների թերասնման դեմ...»:

Տարիներ շարունակ պրոֆեսոր Մելիքյանը նաեւ կազմակերպում է համալսարանականների ճամփորդություններ, իր ուսանողներին ուղեկցում դեպի Արցախ: «Նրանք ծառեր են տնկում իրենց ղարաբաղցի ընկերների հետ, ծանոթանում, մտերմանում են»:

Մելիքյանի աշխատասենյակը լի է բույսերով: Գորիս-Ստեփանակերտ ճանապարհի մոտ կան հազարավոր մատղաշ ծառեր, որ նա ինքն է տնկել վերջին տարիներին: «Մեր անտառները մեզ պահպանեցին խավար ու ցուրտ տարիներին: Հիմա մենք պետք է խնամենք անտառները, քանզի վտանգված են: Տարածքը ծաղկապատելու փոխարեն մենք ծառեր ենք տնկում: Երեսուն տարում ես ավելի քան 200 հազար ծառ եմ տնկել Հայաստանում եւ 7 հազար՝ Արցախում»:

Քաղցկեղից հրաշքով փրկված Մելիքյանի հավատքը նրա եռանդի անսպառ աղբյուրն է: Հուժկու ձայնը լրացնում է կատարյալ հեղափոխականի կերպարը, որը վեր է կուսակցություններից, խորապես կապված է նախնյաց հողին: Պրոֆեսոր Մելիքյանը արտահայտվում է ընտիր հայերենով՝ համեմելով քնարական պատկերներով՝ ըստ Խայամի եւ Հաֆեզի պարսկական բանաստեղծական ավանդույթի: Ժողովրդին ծառայելու նրա ձգտումը մեզ հիշեցնում է, որ խավարամտության այս ժամանակներում էլ կան սկզբունքային հեղափոխականներ, որոնք անդուլ կերպով եւ առանց հետ նայելու շարունակում են իրենց ճանապարհը:

ՏԻԳՐԱՆ ԵԿԱՎՅԱՆ

France-Armenie, décembre 2010

Ֆրանս. թարգմ՝ Պ. Ք.

ՀՈԴ ՀԳԱՍՏՈՒԹՅԱՆ

«Հայկական» չարաշահություն

Հայաստանյան որոշ լրատվամիջոցների վերնագրեր ուղղակի աչք են ծակում:

«Պատերազմը կսկսվի Ղարաբաղից, եւ ՀԱՊԿ-ն այստեղ մեզ օգնական չէ», ասում է նախկին ազատամարտիկը: «ԼՂՀ ԱԺ-ն մերժել է Հռչակագրի քննարկումը», պնդում է երկրորդը: Երրորդն ասում է. «Լեռնային Ղարաբաղը սուբյեկտից վերածվել է օբյեկտի»: Չորրորդը «հրաժարվում է», որ Freedom house-ի զեկույցում Լեռնային Ղարաբաղը «ճանաչվել է անազատ»: Հինգերորդը, խոսելով Սուդանի հարավի հանրաքվեի մասին, ընդգծում է. «Էլի Ղարաբաղը մնաց կոտրած տաշտակի առաջ»: Եվ այսպես՝ շարունակ:

Կարող են ասել. «Իսկ ի՞նչ է պատահել, ազատ երկիր է, մարդիկ արտահայտում են իրենց կարծիքը, որին կարող եք համաձայնել կամ՝ ոչ»:

Այո, այդպես է: Եվ այդուհանդերձ՝ կսկսվի պատերազմ, թե ոչ, ով ում կօգնի կամ չի օգնի՝ դա բոլորովին էլ մի մարդու խնդիր չէ: Նրա իմանալիքը չէ: Որոշելիքը չէ: ԼՂՀ արտաքին քաղաքականության եւ անվտանգության հանրային խորհրդի հաղորդագրությունը խոշորատառ գլխագրով տարածելու հետ լրատվամիջոցը չէ՞ր կարող իմանալ նաեւ ԼՂՀ Ազգային ժողովի կարծիքը, թե ինչո՞ւ չի քննարկվել «հեղինակավոր փորձագետների մշակած դարակազմիկ փաստաթուղթը»: ԼՂ «անազատության» մասին դատողություններ անող քաղաքագետն ինչո՞ւ իրեն նեղություն չի տալիս եւ չի խոսում այն հսկայական տարբերությունների մասին, որ կան Ադրբեջանի եւ ԼՂՀ-ի միջեւ: «Սուբյեկտի եւ օբյեկտի» չարչրկված տեսաբանն ինչո՞ւ չի պատասխանում մի պարզ հարցի, թե ի՞նչ գործ ունի ինքը երեւանների «գրանտակեր» միջավայրում: Սուդանի հարավի հանրաքվեն ողջունող լրագրողն ուզո՞ւմ է, որ Լեռնային Ղարաբաղում էլ նման միջոցառում անցկացվի: Այդ դեպքում պիտի մոռանա ԼՂՀ սահմանադրությամբ ամրագրված տարածքների մասին, որոնց անձեռնմխելիության ջատագովն է ներկայանում ինքը՝ այլ դեպքերում:

Ինչո՞ւ է այդպես:

Միանշանակ՝ սեւ-սպիտակ, պատասխան երեւի չկա: Տեսակի խնդիր է հավանաբար: Մեզանում ոմանք «ասիացի» են, ոմանք՝ «եվրոպացի»: Ինչպես եղել է գրեթե միշտ՝ «պարսկամետների» եւ «հունամետների» ժամանակներից ի վեր: Մինչդեռ մենք բոլորով պարտավոր ենք լինել հայամետ, հայասանամետ, պարզապես՝ երկրի համար ցավող:

Չենք դառնում: Չենք ուզում դառնալ: Քանի որ դա մեծ պատասխանատվություն է: Իսկ անպատասխանատու արտելը հետց է: Ինչպես եւ՝ «այլախոհությունը»: Մանավանդ, եթե նորմալ վճարվում է:

Ահա բացեցի էլ. փոստն ու հանդիպեցի մի կոչի. «3 декабря 2010 года создан Совет общественной защиты Георгия Ваняна. В конце ноября 2010 года начата широкая кампания дискредитации его деятельности, в которую вовлечены вся пресса и все телеканалы Армении, многие общественные и политические деятели. Георгию Ваняну и его семье угрожают смертью. Предлагаем присоединиться к сбору подписей под Декларацией поддержки, сделав запись в зоне комментариев»:

Ո՞վ է սպառնում: Եթե սպառնում են, Վանյանը չի՞ կարող դիմել ոստիկանությանը: Եվ ովքե՞ր են ինձ հորդորում միանալ այդ «հռչակագրին»: Խնդրեմ՝ Իրակլի Չիխլաձեն եւ Սեյմուր Բայջանը: Ի՞նչ գործ ունեն նրանք ինձ հետ: Ինչո՞ւ պիտի ես ժամանակ ծախսեմ եւ կարդամ նրանց «բարեւագիրը»: Վերջին անվան դիմաց մեկնաբանված է՝ «գրող, Ադրբեջան»:

Բանն, ուրեմն, հասել է նրան, որ ադրբեջանցի գրո՞ղն ինձ հորդորի պաշտպան կանգնել իմ հայրենակցին: Իսկ այդ Սեյմուր Բայջանը դիմե՞լ է ադրբեջանական իշխանություններին, որ Բաքվում հայկական ֆիլմերի փառատոն կազմակերպվի: Նրանց հորդորե՞լ է, որպեսզի կալանքից ազատ արձակվի Խոջալուի մասին ճշմարտության համար դատապարտված լրագրող Էյնուլլա Ֆաթուլլաեւը: Թող դիմի եւ եթե այդքանից հետո կենդանի կամ ազատության մեջ մնա, խնդրեմ՝ կարող է զբաղվել Գեորգի Վանյանով: Այդ Իրակլի Չիխլաձեն վրաց մամուլում մի տող բան գրե՞լ է իր հայրենակից Մարխուլիայի հայտյաց հրապարակումների դեմ: Եթե գրել է, թող նախ դրանք էլ. փոստով ուղարկի ինձ, ապա նոր գլխիս «քարոզ կարդա»:

Եթե քաջություն ունենար, Գեորգի Վանյանը պիտի խոստովաներ, որ շատ ձախլիկ գործ է նախաձեռնել: Դրա համար էլ չի հաջողել: Այդպես չի լինում՝ քո երկիրն ու ժողովրդին օրը հարյուր անգամ անվանարկեն, իսկ դու ադրբեջանական ֆիլմերի փառատոն ուզենաս կազմակերպել: Եվ պարզ է, թե ով եւ ինչու է նրան մղել այդ քայլին:

Օրերս ինձ մի ցնցող դեպք պատմեցին:

- Դուք գիտե՞ք, որ ղարաբաղյան պատերազմում մենք «Զոյա Կոսմոդեմյանսկայա» ենք ունեցել,- զրուցակիցս նախկին ԼՂԻՄ գործկոմի պատասխանատու աշխատող Վիլեն Բեգլարյանն էր:

- Ոչ, չեմ լսել:

Եվ նա պատմեց, որ Ասկերանի շրջանի Փրջամալ գյուղի բուժքույր Նադեժդա Բաղդասարյանը 1992թ. մայիսին ադրբեջանական բանակի ներխուժման ժամանակ այլ կանանց հետ գերի է տարվել Աղդամ: Հրոսակներն սպիտակել են, որ հայ կինը տեսախցիկների առաջ ասի. «Ղարաբաղն ադրբեջանական հող է», իսկ նա հրաժարվել է: Նույնիսկ ահավոր կտանջներից հետո էլ չի հաջողվել կոտրել բուժքրոջ կամքը: Հակառակը, նա ասել է, որ եղել է ինքնաթաշտանական ջոկատի անդամ, խնամել է վիրավորներին, նրանց համար ճաշ է եփել: Եւ բարբարոսները նրան կենդանի վառել են: Վիլեն Բեգլարյանի բարեկամին այդ դեպքի մասին պատմել է մի նախկին աղդամցի, որը հիմա ապրում է Ռյազանում:

Փաստն իրոք հայտնի է՝ այդ գյուղից ութ կին է գերեվարվել: Մեկին ազատ են արձակել՝ պայմանով, որ նա Արցախում որոնի եւ գտնի իրենց կողմից անհայտ կորած համարված ինչ-որ մեկին: Մյուս կանանց մասին որեւէ տեղեկություն առ այսօր չկա: Ամենայն հավանականությամբ, բոլորն արժանացել են Նադեժդայի ճակատագրին:

Այս պատմությունը միակը չէ: Այդ մասին ադրբեջանական կողմը համառորեն ոչինչ չի խոսում: Ընդհակառակը, իրենց ոճրագործությունները ճգնում են վերագրել մեզ: Իսկ Գեորգի Վանյանը խոսում է... Խոջալուի «դաժանություններից»: Եվ նրանով «հետաքրքրվում են»:

Գեորգի Վանյանը, ԼՂ-ն «օբյեկտ» տեսնողը, «կոտրած տաշտակի» մասին խոսողն ու «Հռչակագրի մերժումը համազգային ողբերգություն» ներկայացնողը, Freedom house-ի զեկույցով թափուն կամ աչքառ հրաժարողը ՆՐԱՆՑ՝ այդ անտես, բայց ներկա ուժերին պետք են այնքան ժամանակ, քանի դեռ հնարավորություն ունեն սեփական չարաշահությունը, որ ակնհայտորեն գալիս է այդպես էլ չկայանալուց, ներկայացնել իբրեւ «եվրոպական մտածողություն»: Կամ՝ «այլընտրանք»: Վճարում եւ ստանում են այն, ինչ իրենց պետք է:

Եվ «չարաշահությունը» դառնում է «հանրայնորեն պահանջված զբաղմունք»: Իսկ խրամատից անդին եթե այլախոհության նշույլ կա, ապա միայն՝ որ «ի՞նչ կարիք կա էդքան երկար չանա ծեծելու, մեկ է՝ հարցը պատերազմով է լուծվելու»:

- Այսպես ի՞նչ եք անում, հայրենական տիկին-պարոն «եվրոպականացածներ»:

ՎԱՀԲԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Մեդվեդեւ, Պուտին. ո՞րն է խնդիրը

Կարելի է ասել, որ Ռուսաստանում արդեն լայն թափ է uտացել նախագահական ընտրությունների քարոզչությունը, թեեւ դրանք տեղի են ունենալու 2012 թվականին: Ամեն մի էական իրադարձություն՝ ազգամիջյան բախումներ, ահաբեկչական գործողություններ, նույնիսկ բնության քմայքներ եւ այլն, դիտվում է այդ տեսանկյունից: Բոլորն են հասկանում, որ իշխանական բարձրագույն պաշտոնին իրապես կարող են հավակնել միայն Մեդվեդեւը եւ Պուտինը: Միեւնույն ժամանակ գնալով ավելի ակնհայտ է դառնում, որ նրանցից ով էլ հաղթի, երկրի կյանքում սուր փոփոխություններ տեղի կունենան. իդիլիկ թվացող երկյակից յուրաքանչյուրի հետեւում ձեւավորվում են տարբեր քաղաքական ուժեր ու շահեր ինչպես Ռուսաստանում, այնպես էլ արտասահմանում, որոնք էլ կպայմանավորեն նրանց գործելակերպը:

Եթե վերցնենք այդ թեմայով վերջին շրջանի բազմաթիվ հրապարակումները, ապա դրանց մեջ առանձնանում է Անատոլի Չուբայսի հարցազրույցը «Սոբեսեդնիկ» թերթում: Ինչո՞վ: Առաջին հերթին նրանով, որ Չուբայսը «լեգենդար» անձնավորություն է Ռուսաստանում՝ մեծ սեփականաշնորհիչ, երկրի հարստությունները թալանած ու ծախած անձ, արտադրության եւ էլեկտրահամակարգի գերեզմանափոր եւ առհասարակ բազմադեմ մեղսագործ անհատականություն, որին ռուսներն ատում են անմնացորդ եւ չեն կարող անտեսել նրա հայացքները: Մանավանդ, երբ հիշյալ հարցազրույցում նա իր կարծիքն է հայտնում նաեւ հենց Մեդվեդեւի եւ Պուտինի ընտրության հավանականության հարցի մասին: Մեջբերենք մի հատված այդ զրույցից.

«- Կարելի՞ է ակնկալել Պուտինի վերադարձը նախագահական աթոռին 2012 թվականին:

- Կարելի է, բայց ինձ թվում է՝ այդ սցենարը նվազ հավանական է:

- Այսինքն, հաջորդ նախագահը դարձյա՞լ Մեդվեդեւն է:

- Դա ինձ ավելի հավանական է թվում:

- Դուք ունե՞ք դա վկայող փաստեր:

- Բացառապես առաջնորդվում եմ բնազդով, իսկ դա ինձ հազվադեպ է դավաճանում»:

Բնազդը՝ բնազդ, բայց հազիվ թե Ելցինի օրոք Ռուսաստանի «դեմոկրատացման ու լիբերալացման», իսկ ըստ էության՝ երկրի քայքայման գործում չարագուշակ դեր խաղացած մարդը նման սկզբունքային հարցում առաջնորդվի սոսկ բնազդի զգացումով:

Ռուսաստանի լրատվամիջոցներում հաճախ է գրվում, որ «Շիկահեր հրեայի» անխորտակելիության գլխավոր պայմանը նրան ցույց տվող մեծ աջակցությունն է համաշխարհային գլոբալիստական, սիոնիստական ուժերի կողմից. այստեղից է գալիս նրա ինքնավստահությունը: Ավելին, Ռուսաստանում Բիլդերբերգյան ակումբի ոչ պաշտոնական ներկայացուցիչ Չուբայսի կարծիքները չպետք է ընդունել որպես փորձագետի կամ մեկնաբանի խոսքեր, այլ Ռուսաստանի քաղաքական կյանքի առաջատար խաղացողներից մեկի հստակ հիմնադրույթներ եւ գործունեության ուղեցույց:

«Ազգի» ընթերցողներին հակիրճ ներկայացնենք, թե ինչ է այդ միջազգային կազմակերպությունը: Բիլդերբերգյան ակումբը ստեղծվել է 1954 թվականին ԱՄՆ-ի հատուկ ծառայությունների ջանքերով եւ համարվում է յուրօրինակ «գաղտնի համաշխարհային կառավարություն»: Ներկայումս այն գլխավորում է ամերիկացի հզորագույն մագնատ Դեւիդ Ռոկֆելլերը, տեղակալն է ԱՄՆ-ի նախկին պետքարտուղար Հենրի Քիսինջերը: Ակումբի ամենաազդեցիկ միջուկը ամերիկյան հրեական-մասոնական վերնախավերն են. 383 անդամներից մեկ երրորդը ամերիկացիներ են՝ 128 հոգի: Բիլդերբերգականները բոլորն էլ տարբեր պետությունների, գերազանցապես ամերիկյան ու եվրոպական, գործող կամ պաշտոնաթող ազդեցիկ քաղաքագետներ են, բանկիրներ, ֆինանսիստներ, մասնաբային գործարար մարդիկ, առաջատար ԶԼՄ-ների ներկայացուցիչներ եւ այլն: Ակումբը վերահսկում է միջազգային գործընթացները, իր գաղտնի նիստերում ընդունում ստրատեգիական որոշումներ ֆինանսական, ռազմական եւ սոցիալական հարցերի վերաբերյալ, շրջանցելով առաջատար երկրների կառավարական մարմինները: Ահա Ռոկֆելլերի հայտարարություններից մեկը. «Աշխարհը շատ ավելի բարդ է եւ պատրաստ է գնալ դեպի համաշխարհային կառավարություն: Մոլորակի ինտելեկտուալ ընտրախավի եւ բանկիրների վերազգային գերագույն իշխանությունը, անտարակույս, ավելի նախընտրելի է, քան ազգային ինքնորոշումը, որը գերադասվել է անցած հարյուրամյակում»:

Այն բանի հավանականությունը, որ Ռուսաստանում գալիք ընտրությունները կընթանան Բիլդերբերգյան ակումբի ընդերքում մշակված եւ Չուբայսի հնչեցրած սցենարով, բավականին մեծ է, գրում է ռուսական թերթերից մեկը: Իսկ եթե դա այդպես է, ապա Ռուսաստանին սպասում են ե՛ւ խռովություններ, ե՛ւ ազգամիջյան բախումներ, ե՛ւ արյուն ու հեռանկարում՝ լիբերալ բռնապետ:

Արդ, ինչո՞ւ Մեդվեդեւը եւ ոչ Պուտինը: Ինչո՞ւ «համաշխարհային կառավարությունը», լիբերալ գաղափարախոսության ջատագովները նախընտրում են առաջինին: Անկարելի է չնկատել, թե ինչպես են զոր ու գիշեր ռուսաստանյան ու արեւմտյան բազում լրատվամիջոցներ տարփողում տեղեկություններ ներկայիս վարչապետի ավտորիտար գործելակերպի, նրա անբավ հարստությունների, պալատների, ուժայինների հովանավորման, սիրուհիների մասին եւ այլն:

Բանն այն է, որ Մեդվեդեւը երկրի արդիականացման իր ծրագրերով հիշեցնում է գորբաչովյան վերակառուցումը: Թե ինչի հանգեցրեց շաղակրատությամբ զուգորդված այդ արկածախնդրությունը, հայտնի է բոլորին, հայտնի է նաեւ, որ ներսից հսկա գերտերությունը քայքայելու ծրագրերն իրականացրեց Արեւմուտքը, ինչպես էլ որ կոչվեն արտաքին ներգործության սուբյեկտները՝ կառավարություններ, ակումբներ, մասոնական



կումները, ապա դրանց մեջ առանձնանում է Անատոլի Չուբայսի հարցազրույցը «Սոբեսեդնիկ» թերթում: Ինչո՞վ: Առաջին հերթին նրանով, որ Չուբայսը «լեգենդար» անձնավորություն է Ռուսաստանում՝ մեծ սեփականաշնորհիչ, երկրի հարստությունները թալանած ու ծախած անձ, արտադրության եւ էլեկտրահամակարգի գերեզմանափոր եւ առհասարակ բազմադեմ մեղսագործ անհատականություն, որին ռուսներն ատում են անմնացորդ եւ չեն կարող անտեսել նրա հայացքները: Մանավանդ, երբ հիշյալ հարցազրույցում նա իր կարծիքն է հայտնում նաեւ հենց Մեդվեդեւի եւ Պուտինի ընտրության հավանականության հարցի մասին: Մեջբերենք մի հատված այդ զրույցից.

«- Կարելի՞ է ակնկալել Պուտինի վերադարձը նախագահական աթոռին 2012 թվականին:

- Կարելի է, բայց ինձ թվում է՝ այդ սցենարը նվազ հավանական է:

- Այսինքն, հաջորդ նախագահը դարձյա՞լ Մեդվեդեւն է:

- Դա ինձ ավելի հավանական է թվում:

- Դուք ունե՞ք դա վկայող փաստեր:

- Բացառապես առաջնորդվում եմ բնազդով, իսկ դա ինձ հազվադեպ է դավաճանում»:

Բնազդը՝ բնազդ, բայց հազիվ թե Ելցինի օրոք Ռուսաստանի «դեմոկրատացման ու լիբերալացման», իսկ ըստ էության՝ երկրի քայքայման գործում չարագուշակ դեր խաղացած մարդը նման սկզբունքային հարցում առաջնորդվի սոսկ բնազդի զգացումով:

Ռուսաստանի լրատվամիջոցներում հաճախ է գրվում, որ «Շիկահեր հրեայի» անխորտակելիության գլխավոր պայմանը նրան ցույց տվող մեծ աջակցությունն է համաշխարհային գլոբալիստական, սիոնիստական ուժերի կողմից. այստեղից է գալիս նրա ինքնավստահությունը: Ավելին, Ռուսաստանում Բիլդերբերգյան ակումբի ոչ պաշտոնական ներկայացուցիչ Չուբայսի կարծիքները չպետք է ընդունել որպես փորձագետի կամ մեկնաբանի խոսքեր, այլ Ռուսաստանի քաղաքական կյանքի առաջատար խաղացողներից մեկի հստակ հիմնադրույթներ եւ գործունեության ուղեցույց:

«Ազգի» ընթերցողներին հակիրճ ներկայացնենք, թե ինչ է այդ միջազգային կազմակերպությունը: Բիլդերբերգյան ակումբը ստեղծվել է 1954 թվականին ԱՄՆ-ի հատուկ ծառայությունների ջանքերով եւ համարվում է յուրօրինակ «գաղտնի համաշխարհային կառավարություն»: Ներկայումս այն գլխավորում է ամերիկացի հզորագույն մագնատ Դեւիդ Ռոկֆելլերը, տեղակալն է ԱՄՆ-ի նախկին պետքարտուղար Հենրի Քիսինջերը: Ակումբի ամենաազդեցիկ միջուկը ամերիկյան հրեական-մասոնական վերնախավերն են. 383 անդամներից մեկ երրորդը ամերիկացիներ են՝ 128 հոգի: Բիլդերբերգականները բոլորն էլ տարբեր պետությունների, գերազանցապես ամերիկյան ու եվրոպական, գործող կամ պաշտոնաթող ազդեցիկ քաղաքագետներ են, բանկիրներ, ֆինանսիստներ, մասնաբային գործարար մարդիկ, առաջատար ԶԼՄ-ների ներկայացուցիչներ եւ այլն: Ակումբը վերահսկում է միջազգային գործընթացները, իր գաղտնի նիստերում ընդունում ստրատեգիական որոշումներ ֆինանսական, ռազմական եւ սոցիալական հարցերի վերաբերյալ, շրջանցելով առաջատար երկրների կառավարական մարմինները: Ահա Ռոկֆելլերի հայտարարություններից մեկը. «Աշխարհը շատ ավելի բարդ է եւ պատրաստ է գնալ դեպի համաշխարհային կառավարություն: Մոլորակի ինտելեկտուալ ընտրախավի եւ բանկիրների վերազգային գերագույն իշխանությունը, անտարակույս, ավելի նախընտրելի է, քան ազգային ինքնորոշումը, որը գերադասվել է անցած հարյուրամյակում»:

Այն բանի հավանականությունը, որ Ռուսաստանում գալիք ընտրությունները կընթանան Բիլդերբերգյան ակումբի ընդերքում մշակված եւ Չուբայսի հնչեցրած սցենարով, բավականին մեծ է, գրում է ռուսական թերթերից մեկը: Իսկ եթե դա այդպես է, ապա Ռուսաստանին սպասում են ե՛ւ խռովություններ, ե՛ւ ազգամիջյան բախումներ, ե՛ւ արյուն ու հեռանկարում՝ լիբերալ բռնապետ:

Արդ, ինչո՞ւ Մեդվեդեւը եւ ոչ Պուտինը: Ինչո՞ւ «համաշխարհային կառավարությունը», լիբերալ գաղափարախոսության ջատագովները նախընտրում են առաջինին: Անկարելի է չնկատել, թե ինչպես են զոր ու գիշեր ռուսաստանյան ու արեւմտյան բազում լրատվամիջոցներ տարփողում տեղեկություններ ներկայիս վարչապետի ավտորիտար գործելակերպի, նրա անբավ հարստությունների, պալատների, ուժայինների հովանավորման, սիրուհիների մասին եւ այլն:

Բանն այն է, որ Մեդվեդեւը երկրի արդիականացման իր ծրագրերով հիշեցնում է գորբաչովյան վերակառուցումը: Թե ինչի հանգեցրեց շաղակրատությամբ զուգորդված այդ արկածախնդրությունը, հայտնի է բոլորին, հայտնի է նաեւ, որ ներսից հսկա գերտերությունը քայքայելու ծրագրերն իրականացրեց Արեւմուտքը, ինչպես էլ որ կոչվեն արտաքին ներգործության սուբյեկտները՝ կառավարություններ, ակումբներ, մասոնական



ՆԳՆ նախկին ղեկավարը նոր կառավարության կազմում չի ընդգրկվել ժողովրդի դժգոհությունը հարուցած կոշտ մեթոդների պատճառով:

Ասոշիեյթեդ պրես գործակալության տվյալներով, մշակույթի նախարար Ֆարուկ Հոսնին պաշտոնանկ է արվել: Նրան փոխարինում է գրող Գաբեր Ասֆուրը: Բացի դրանից, ստեղծվել է հնությունների գործերի նախարարի պաշտոն, որը կզբաղեցնի երկրում հայտնի հնագետ Զահի Հավասուն:

Պաշտպանության եւ արտաքին գործերի նախարարները մնացել են իրենց պաշտոններում: Ֆինանսների նախարար է դարձել աուդիտորական պալատի նախկին ղեկավար Գաուդաս էլ Մալտը՝ փոխարինելով Յուսեֆ Բուտրոս-Ղալիին:

Ավելի վաղ վարչապետ էր նշանակվել Ահմեդ Շաֆիկը: Նախագահ Մուբարաքը իր պաշտոնավարության 30 տարիների ընթացքում առաջին անգամ նշանակել է փոխնախագահ: Այդ պաշտոնն զբաղեցնում է Օմար Սուլեյմանը: Նշանակումից առաջ նա պետական հետախուզության ղեկավարն էր: Ֆրանսպրեսի տվյալներով, հետախուզության նոր ղեկավար է նշանակվել Մուրադ Մուվաֆին, որն անցյալում Հյուսիսային Սինայի նահանգապետն էր:

Նախորդ կառավարությունն արձակվել էր հունվարի լույս 29-ի գիշերը՝ բողոքի զանգվածային ցույցերից հետո:

Փոխնախագահ Օմար Սուլեյմանը նախագահ Հոսնի Մուբարաքին առաջարկել է երկրում ճգնաժամի հաղթահարման ծրագիր: Դրանով նախատեսվում են 82-ամյա Մուբարաքի պաշտոնաթողություն, իշխանության ժառանգման սկզբունքի բացառում, նոր կառավարության կազմում գործարարների բացակայություն, ինչպես նաեւ սահմանադրական բարեփոխումներ եւ կառավարող կուսակցության առաջնորդների փոխատեղումներ:

Մուբարաքի պատասխանն առայժմ հայտնի չէ: Սուլեյմանը նախագահի մերձավորագույն զինակիցներից է եւ նոր պայմաններում կարող է դառնալ նրա իրավահաջորդը: «Ալ Ջազիրա» հաղորդում է, որ «Ապրիլի 6» ընդդիմադիր կազմակերպության կոչով փետրվարի 1-ին Կահիրեում անցկացված բողոքի հանրահավաքներին ու ցույցերին մասնակցել է մոտ 1 միլիոն մարդ: Ցուցարարները պահանջում էին Մուբարաքի հրաժարականը, ազատ ընտրություններ, սահմանադրական բարեփոխումներ: Բանակը նախապես խոստացել էր չկրակել ցուցարարների վրա: Հանրահավաքի ժամանակ ընդդիմության առաջնորդներից Մոհամմեդ էլ Բարադեյը նախագահ Մուբարաքին հորդորել է «մինչեւ ուրբաթ» հրաժարական տալ:

Եվրոմիությունը Բելառուսին՝ «անցանկալի»

Այն ժամանակ, երբ Հորդանանի թագավորը ցրում է կառավարությունը, իսկ Կահիրեում միլիոնանոց ցույց են հրավիրում ու անցկացնում, երբ արաբական աշխարհի մի հատվածն իրար է խառնվել, մյուսն էլ շունչը պահած հետեւում է իրադարձությունների զարգացմանը, փորձելով կանխատեսած ճաք է տալիս Եվրոմիության Արեւելյան գործընկերության գաղափարն ու ծրագիրը: Դրանում առանց այն էլ մեծ հարցականներով հայտնված Բելառուսը, այս օրերի ԵՄ պաշտոնյաների արձագանքի համաձայն, կրկին հայտնվում է «դաշտից դուրս», ավելին՝ «անցանկալի» վիճակում:

Եվրոմիության նախարարների խորհուրդը այս շաբաթվա սկզբին վերջնական որոշում կայացրեց Բելառուսի առնչությամբ: Այդպիսով ԵՄ տարածք մուտքն արգելվում է բելառուսցի 158 պաշտոնյաների եւ այն անձանց համար, որոնք առնչվում են ընդդիմության, իրավապաշտպանների եւ ՀԿ-ների նկատմամբ ճնշումներին, որ սկսվել են դեռեւս անցյալ տարվա դեկտեմբերի 19-ին:

Մի որոշ ժամանակ առաջ Բելառուսի նախագահի եւ որոշ պաշտոնյաների համար անցագրային նման արգելք էր գործում, որ հանվել էր վերջին շրջանում, սակայն այս անգամ, ստացվում է, որ ոչ միայն արգելքը կրկին գործում է, այլեւ ավելացել է «անցանկալիների» ցուցակը ավելի քան 100 անունով: Ընդ որում, այս անգամ Եվրոմիությունը նաեւ կարգելափակի «անցանկալիների» հաշվեհամարները, որոնք գտնում են արտերկրում:

ԵՄ այս պատժամիջոցները կգործեն, քանի դեռ Բելառուսում քաղաքական բանտարկյալներ կան, ու դրան զուգահեռ էլ շարունակվում են ընդդիմության ճնշումները: Դրանց ավելացել են նաեւ ԱՄՆ արգելքները: Ընդ որում, Միացյալ Նահանգները Բելառուսի հանդեպ առավել խիստ գտնվեց, քան Եվրոմիությունը: ԱՄՆ-ի որոշմամբ արգելվում է համագործակցել «Բելնավթիմ» կոնցեռնի հետ, որը Բելառուս արտարժույթի հիմնական մատակարարն է ու երկրի հիմնական արտահանողը: Եվ սա այն դեպքում, երբ Եվրոմիության վրդովմունքը չարտահայտվեց տնտեսական պատժամիջոցներով:

Ամեն դեպքում, Եվրոմիության նախարարների խորհուրդը ոչ ամբողջությամբ արձագանքեց Եվրոխորհրդարանի բանաձեւին, որով առաջարկվում էր տնտեսական պատժամիջոցներ կիրառել Բելառուսի դեմ: Եվրոխորհրդարանն իր բանաձեւում առաջարկել էր սառեցնել համագործակցությունը մի շարք միջազգային տնտեսական կազմակերպությունների հետ, փակել եվրոպական շուկան բելառուսական հիմնական արտահանողների համար: ԵՄ-ն այս քայլերին չգնալը բացատրում է շարքային բելառուսների շահերը չվնասելու ցանկությամբ այն դեպքում, երբ կիրառված անցագրային արգելքները, Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի խոսքերով, սովորական են դարձել: Ա. Հ.

ԲՈՂՈՔԻ ՅՈՒՅՑԵՐԻ 8-ՐԴ ՕՐ

ԱԶԳ

Գրախոսություն

Արարատ Հակոբյանի «Խորհրդային Հայաստանը Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերում»

Օրերս լույս տեսավ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արարատ Հակոբյանի «Խորհրդային Հայաստանը Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերում» ծավալուն եւ խիստ արժեքավոր մենագրությունը, որը ծնվել է հեղինակի երկարատեւ տքնաջան որոնումների արդյունքում: Հակոբյանի կողմից բազմակողմանիորեն ու հմտորեն պատմաքննական անաչառ լուսաբանման են ենթարկվել 1920-ական թթ. Այսրկովկասում ընթացող բարդ ու ոչ միանշանակ գործընթացները: Լիարժեքորեն ու սկզբունքայնության դիրքերից երեւակվում է Հայաստանի խորհրդայնացման բարդ գործընթացը եւ այդ հիմնահարցում տեղ գտած հետագա զարգացումներն ու հնարավոր բոլոր կարեւոր տեղաշարժերը: Հակոբյանի պատմագիտական մեծ արժեք ներկայացնող այս աշխատանքում վերլուծական բարձր մակարդակով բացահայտվել է հիմնախնդրի լուծման ուղղությամբ բոլոր շահագրգիռ կողմերի ձեռնարկած միջոցառումներն ու, առհասարակ, այդ ուղղությամբ տարածաշրջանում ընթացող ռազմաքաղաքական եւ հատկապես դիվանագիտական գործընթացները: Ընդ որում, հարկավոր է հատուկ ընգծել, որ Հայաստանի համար կենսականորեն մեծ կարեւորություն ներկայացնող այդ հիմնահարցի հոլովույթները ճանաչված մասնագետը դիտարկել է ռուս-թուրքական, հայ-թուրքական եւ հայ-ռուսական հարաբերություններով պայմանավորված համալիր մոտեցումների դաշտում եւ գործնականում նորովի:

Ռազմաքաղաքական եւ միջազգային դիվանագիտության տեսակետից հայ ժողովրդի համար ճակատագրական 1920-1921թթ. ընթացում կնքվեցին Ալեքսանդրապոլի, Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերը: Դրանք ռուս-թուրքական մերձեցման եւ Ռուսաստանի թողտվությամբ թուրքական հարձակման եւ անհավասար պատերազմում պարտված Հայաստանին ուժով պարտադրված ակտեր էին, որոնցով փաստորեն Հ�հ տարածքները բաժանվեցին Թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ: Ստեղծված այդ բարդ իրավիճակում նորաստեղծ Խորհրդային Հայաստանի կարգավիճակի ու հետեւանքների խնդիրը մեր պատմության կարեւոր ու վճռորոշ հարցերից է, որի գիտական պատշաճ մակարդակով հանգուցալուծումը տրվել է Ա. Հակոբյանի սույն մենագրությունում: Աշխատություն, որը կոչված է բացահայտելու անցյալի պատմական անարդարությունները, գնահատելու դրանք:

Մեր պատմության մեջ շատ են անարդար հանգուցալուծված հարցերը, որոնցից են 1921թ. բիրտ ուժով Հայաստանին պարտադրված Մոսկվայի խորհրդա-թուրքական եւ Կարսի թուրք-անդրկովկասյան պայմանագրերը, որոնք անդառնալի ու կորուսաբեր հետեւանքներ ունեցան եւ այսօր էլ շարունակում են իրենց սեւ դերակատարությունը հայ ժողովրդի կյանքում: Ուսումնասիրության, իրավահաջորդության եւ բովանդակության տեսակետից գրեթե նույնացող այդ պայմանագրերի ողջ էությունն ու իմաստը լավ ըմբռնելու համար Ա. Հակոբյանը ճիշտ ուղիով է գնացել՝ նախ առանձին գլխով ներկայացնելով Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Պայմանագիր, որն ըստ էության ստորագրման պահից իրավական ուժ չուներ, սակայն անկախ ամեն ինչից, համարվում է պատմական փաստաթուղթ եւ անուղղակի կերպով իր ազդեցությունն է թողել Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերի վրա: Հատկապես, որ երեք պայմանագրերով գծված հայ-թուրքական սահմանը գրեթե նույնական է:

Խորհրդային տարիներին հասկանալի պատճառներով քիչ ու միակողմանի են ուսումնասիրվել այդ պայմանագրերը, իսկ 1990-ական թթ. սկսած անդրադարձներ կան ժամանակաշրջանի պատմա-իրավական հարցերին նվիրված մեծ թվով ուսումնասիրություններում, որովհետեւ այդ խնդրի վերհանումը եւ բազմակողմանի ուսումնասիրությունն ունի ոչ միայն պատմագիտական, այլեւ քաղաքական արդիական նշանակություն եւ կարեւորություն: Հետխորհրդային շրջանում Հայաստանի երրորդ հանրապետությունը որպես իր կորսված հողերի պահանջատեր իրավասու է չճանաչել տասնյակ տարիներ հայ ժողովրդին պարտադրված այդ պայմանագրերն ընդհանրապես: Իսկ Կարսի պայմանագիրը՝ հատկապես, որովհետեւ Ալեքսանդրապոլի պայմանագիրն առհասարակ երբեւէ չի վավերացվել եւ իրավական ուժ չի ունեցել, իսկ Մոսկվայինը՝ Հայաստանը պարզապես չի ստորագրել:

Աշխատության հեղինակը ցուցաբերելով հարցին խորագիտակ պատմաբանին վայել սկզբունքայնություն, այդ երեք պայմանագրերը դիտարկել է միասնության ու փոխադարձ կապի մեջ: Անհրաժեշտության դեպքում կատարել այդ պայմանագրերի համեմատական վերլուծություն, տվել դրանց պատմաքաղաքական եւ իրավական գնահատականը: Միանգամայն շահեկան է, որ Ա. Հակոբյանը չի զլացել եւ ոչ միայն պայմանագրերի բնագրերը, այլեւ նրանց կից հավելվածների բնօրինակներն ու պատճենները համեմատել ու համադրել է իրար, որոնց արդյուքում բացահայտել է թարգմանությունների ժամանակ թույլ տրված անճշտություններն ու աղավաղումները:

Օտարազգի եւ հայ հեղինակների բոլոր ուսումնասիրություններին քաջատեղյակ, ճշմարտացի, անկողմնակալ ու սկզբունքային ուսումնասիրող Ա. Հակոբյանը ոչ միայն նշում է, որ խնդրո առարկա հարցի վերաբերյալ առկա են ծայրահեղ գնահատականներ, որոնք արդյունք են միակողմանի եւ կանխակալ մոտեցման, այլեւ օգտագործելով հսկայական փաստագրական եւ արխիվային վավերագրեր, որոնց մի մասը նոր է գիտական շրջանառության տիրույթ տեղափոխվել, հաջողությամբ եւ համակողմանիորեն բացահայտում է հարցի խորքային պատճառահետեւանքային կապերը եւ հայեցակարգային նոր մոտեցումներով եւ մեր օրերում նոր գաղտնազերծված արխիվային փաստաթղթերի լույսի ներքո, օբյեկտիվ լուսաբանողի դիրքերից, վերագնահատում դրանք: Հիմնախնդրին նվիրված այս ծանրակշիռ պատմագիտական երկում խորագիտակ մասնագետի բարձրաճաշակ մոտեցումով ներկայացնելով խորհրդային, սփյուռքահայ, կուսակցական ու «չեզոք» ուսումնասիրողների աչառու եւ կողմնակալ մոտեցումները, Հակոբյանը ցույց է տալիս, որ Հայկական հարցում, այնուամենայնիվ, տեղի են ունեցել անդրկուլիսային բանակցություններ, որոնցում էլ որոշվել են Հայաստանի սահմանները հերթական անգամ ի վնաս հայ ժողովրդի: Իսկ վերոհիշյալ պայմանագրերից հատկապես՝ Մոսկվայինը, իրավացիորեն որպես գործարք է որակում, որովհետեւ Մոսկվան հայկական հողերի հաշվին տարածքային զիջումներ կատարեց քեմալականներին, որպեսզի նրանց ետ պահեր Անտանտի կողմն անցնելուց եւ, որ Հայաստանի սահմանային հարցը լուծվում էր առանց նրա ներկայացուցիչների գիտության ու մասնակցության: Արդյունքում Առաջին աշխարհամարտում պարտված եւ այդ ընթացքում ծանրագույն հանցագործություն՝ Հայոց ցեղասպանություն կատարած Թուրքիան փոխանակ պատասխանատվության կանչվեր եւ պատժվեր, ընդհակառակը, կեղծ հեղափոխություն ու բարեկամություն խաղալով բոլշեւիկյան Ռուսաստանի հետ՝ ոչ միայն պատիժ չկրեց ու չվերադարձրեց Սեւրի դաշնագրով նախատեսված արեւմտահայ նահանգները, այլեւ Մոսկվայի պայմանագրով նույնիսկ որպես պարգեւ ստացավ արեւելահայ տարածքների զգալի մասը:

Հանրագումարի բերելով նշված երեք պայմանագրերի արդյունքները, պրոֆեսոր Հակոբյանը ցավով արձանագրում է, որ այդ հարցում մեղքի իրենց բաժինն ունեին ՀՀ իշխանությունները, որոնք չունենալով այդ լիազորությունը, ստորագրեցին չարաբաստիկ Ալեքսանդրապոլի պայմանագիրը, Թուրքիան, որն օգտվելով ՀՀ-ի ծանր վիճակից, պարտադրեց դրանք, Ռուսաստանը, որը ելնելով բացառապես սեփական շահերից եւ Անտանտի երկրները, որոնք անտարբերության մատնեցին իրենց իսկ կնքած Սեւրի պայմանագիրը: Արդյունքում Թուրքիային անցան Կարսի մարզը 17250 քառ.կմ. եւ Սուրմալուի գավառը՝ 3450 քառ. կմ., ընդամենը 20700 քառ.կմ. արեւելահայ տարածք: Բացի այդ, Թուրքիայի պահանջով Նախիջեւանի մարզը՝ 5500 քառ.կմ. եւ Ղարաբաղը՝ 4160 քառ.կմ. նվիրաբերվեցին Ադրբեջանին, այսինքն, 1920-1921թթ. Հայաստանից խլվեց նրա ունեցած իրական տարածքի կեսից ավելին՝ 20700+9660 30360քառ.կմ.:

Իհարկե, պայմանագրերը հավերժական չեն, իսկ ուժի պարտադրանքով կնքվածներն՝ առավել եւս: Հայ հանրույթը չի հաշտվել երբեք եւ կանի ամեն ինչ արդարությունը վերականգնելու համար: Իսկ պրոֆեսոր Հակոբյանն իր այս աշխատությունով գալիս է մաս կազմելու պատմաբանների այն փաղանգին, որոնք իրենց առջեւ դրված հարցերի ուսումնասիրության բնագավառում գնում են մինչեւ հնարավորինս ավարտուն հանգուցալուծման եւ իրենց արժանի նպաստն են բերում հօգուտ դրա: Կարծում ենք, որ հարգարժան պրոֆեսորի այս մենագրությունն իր լիովին արժանի տեղը կգտնի պատմաբանների, քաղաքագետների, ինչպես նաեւ ընթերցող լայն հասարակության եւ, ընդհանրապես Հայկական խնդրով հետաքրքրվող անձանց համար:

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ

ԼՈՒՐԵՐ

Վախճանվել է ամերիկահայ ֆիլմարտադրիչ Մայքլ Հակոբյանը

Դեկտեմբերի 10-ին Կալիֆոռնիայի իր բնակարանում վախճանվել է ամերիկահայ վաստակաշատ ֆիլմարտադրիչ Մայքլ Հակոբյանը, տեղեկացնում է Կանադայում հրատարակվող «Արարատ» շաբաթաթերթը:

Մայքլ Հակոբյանը ծնվել էր Խարբերդում 1913 թվին: Ցեղասպանությունից հրաշքով փրկված երեխան մոր հետ հետագայում հաստատվել էր Ֆրեզնոյում եւ Հարվարդ համալսարանից վկայվել միջազգային հարաբերությունների դոկտորայի աստիճանով: Սակայն նվիրվել է ֆիլմարվեստին եւ դրա միջոցով հայ ժողովրդի արդար դատի միջազգային ճանաչման նպատակին: 1979-ին հիմնել էր «Armenian Film Foundation» ոչ շահութաբեր հաստատությունը, որը թողարկել է 17 վավերագրական ֆիլմեր հայկական ինքնության, մշակույթի եւ իրավունքների մասին: Դրանց թվում են «Where Are My People» (1965), «Որտե՞ղ է իմ ժողովուրդը», «The Forgotten Genocide» (1975) «Մոռացված ցեղասպանությունը» եւ «The River Ran Red» (2008), «Գետը կարմիր ներկվեց» ֆիլմերը: Վերջինս 2009-ին արժանացել է Նյու Յորքի վավերագրական ֆիլմերի միջազգային փառատոնի առաջին մրցանակին:

Իր 50-ամյա գործունեության ընթացքում իր հիմնադրած «Atlantis Film Co.» կինոընկերության միջոցով նկարահանել է ավելի քան 50 ֆիլմեր փոքրամասնությունների մասին: Նրա ստեղծագործությունները երկու անգամ արժանացել են «Էմմի» մրցանակի հիշատակության:

Հ. Ծ.

Ցեղասպանությանն առնչվող թատերախաղ Թուրքիայում

Անցյալ տարվա նոյեմբերին 35-ամյակը նշած, Կանադայում հրատարակվող «Արարատ» ազգային, մշակութային եւ հասարակական շաբաթաթերթից տեղեկանում ենք, որ Թուրքիայում ճանաչված բեմադրիչ Հալդուն Դորմենն այժմ պատրաստվում է բեմադրել Հայոց ցեղասպանությանն առնչվող մի թատերախաղ, որի հիմքում ընկած է Նեջդեթ Բայընտրի պատմվածքներից մեկը: Նյութը Վանում տեղի ունեցած սիրային պատմությունն է, որտեղ ափսոսանք է հայտնվում, թե մարդիկ ինչպես են փչացրել գեղեցիկ կյանքն ու աշխարհը վերածել դժոխքի: Նախատեսված է, որ պիեսը, որի մեջ որեւէ մեկի հասցեին ամբաստանության որեւէ խոսք չի ուղղված, հանրությանը ներկայացվի ապրիլի 24-ին:

Ըստ հաղորդագրության, Դորմենը դրանից առաջ քրդերեն թարգմանությամբ թուրքական մի պիես է բեմադրել, որը մեծ գոհունակությամբ է ընդունվել քրդական շրջանակների կողմից: Ողբացյալ քուրդ երգիչ Ահմեդ Քայայի կողակիցն այդ առթիվ նշել է. «Երանի այս բոլորը կատարված լիներ հիսուն տարի առաջ»:

Հ. Ծ.

«Աղետ» ֆիլմը ներկայացվել է «Գրիմմե» մրցանակի

Էրիկ Ֆրիդլերի «Աղետ. մի ցեղասպանություն» 90-րոպեանոց ֆիլմը, ի թիվս NDR-ի 11 այլ արտադրությունների, ներկայացվել է 2011-ի «Ադոլֆ Գրիմմե» մրցանակին:

Հեռուստատեսության սահմանած «Ադոլֆ Գրիմմե» մրցանակն ամենամյա է, Գերմանիայում համարվում է հեղինակավորներից մեկը: NDR-ի Հյուսիսարեւմտյան ռադիոհեռուստատեսության առաջին գլխավոր տնօրեն Ադոլֆ Գրիմմեի (1889- 1963) անունով է կոչվում:

Հիշեցնենք, Հայոց ցեղասպանության մասին պատմող «Աղետ» վավերագրությունը 2010-ին շահեց գերմանական հեռուստատեսության մրցանակը վավերագրություն անվանակարգում եւ «Արմին Թ. Վեգներ» մարդասիրական մրցանակը (Humanitarian Award): «Ադոլֆ Գրիմմե» մրցանակի այն ներկայացվել է տեղեկատվություն եւ մշակույթ անվանակարգում: Հաղթողների անունները պարզ կդառնան մարտի 16-ին, մրցանակների հանձնումը՝ ապրիլի 1-ին:

Ան. Հ.
Գերմանիա

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրհներգի (հիմնի) մասին

Ինչպես ընդունուած է, բոլոր երկրներում, պաշտօնական ձեռնարկների եւ միջոցառումների բացումը կատարւում է պետական երկրի ազգային օրհներգով: Հայաստանում, ինչպէս եւ արտերկրում նւագւում կամ երգւում է Հայաստանի Հանրապետության օրհներգը (Մեր հայրենիքը), որը ունկնդրում է ոտնկայս, եւ որին յաճախ ձայնակցում են ներկաները: «Մեր հայրենիքը»՝ ժողովրդականացաւած երգ է, ի մասնաւորի ներկայ Հայաստանի անկախութիւնից յետոյ համայն հայութեան սեփականութիւնն է դարձել: Նոյնը չէ պարագան, Ղարաբաղի օրհներգի նկատմամբ: Արցախի հիմնը թեկուզ համեմատաբար նոր, բայց իր պէտք եղած տարածումը եւ ժողովրդականութիւնը չի գտել (ի բաց առեալ Արցախից): Սփիւռքում յաճախ է պատահում, երբ նոյն իսկ Արցախին կապուած հանդիսութիւնների ժամանակ չի հնչում Արցախի օրհներգը: Տողերիս գրողը անգամներ հարցրել է երաժիշտներից կամ միջոցառումների կազմակերպողներից, թէ ինչու հանդիսութեան բացումը «Արցախի» հիմնով չկատարւեց, պատասխանը միշտ նոյնն է՝ «նոտաները եւ բառերը չունենք» կամ թէ «օրհներգի երաժշտութեան ծանօթ չենք»:

Միաժամանակ պէտք է ընդունել, որ Արցախի օրհներգը, հոգեթով եւ դիւրընկալելի չէ, բաղդատելով Հայաստանի օրհներգին: Նոյնպէս Արցախի հիմնը, պէտք եղած ոգեւորիչ եւ խրոխտ ռիթմ չունենալով չի արտացոլում Արծուաբոյն Ղարաբաղի հերոսական սխրանքները: Այս վերջին պարագան է թերեւս պատճառներից մէկը երգի շատ դանդաղ ընկալման եւ տարածման: Որեւիցէ պարագայում Լեռնային Ղարաբաղը արժանի է՝ մարտունակ, առիւծանող եւ ժողովրդականացած «օրհներգի»:

ԳՐԻԳՈՐ Ա. ԳՐԻԳՈՐԵԱՆ
դեկտ 26, 2010, Նիւ Եորք

Մեծ Սարգսյանը վերընտրվեց շախմատի Հայաստանի ֆեդերացիայի նախագահի պաշտոնում

30 հազար եվրո Սերգեյ Մովսիսյանի տրանսֆերի դիմաց

Երեկ Տիգրան Պետրոսյանի անվան շախմատիստի տանն անցկացվեց շախմատի Հայաստանի ֆեդերացիայի հաշվետու-ընտրական համաժողովը, որը բացեց հանրապետության նախագահ, մարզաձեւի ֆեդերացիայի նախագահ **Սերժ Սարգսյանը**:

2009-2010-ի ընթացքում ֆեդերացիայի կատարած աշխատանքների հաշվետվությունը ներկայացրեց կազմակերպության առաջին փոխնախագահ, գրոսմայստեր **Սմբատ Լպուտյանը**: Նա նշեց, որ վերջին երկու տարիներին ֆեդերացիան զգալի աշխատանք է տարել հանրապետության տարբեր մարզերում շախմատային օջախներ հիմնելու համար: Այսօր դրանց թիվը 46-ն է, որից 4-ը հիմնադրվել են վերջին երկու տարիներին: 2009-ին շախմատի դպրոց է բացվել Վանաձորում, 2-րդ դպրոցը հիմնվել է Գյումրիում, Արմավիրում վերանորոգվել է շախմատի դպրոցը: Մեծ իրադարձություն էր նաեւ շախմատի ակադեմիայի նոր մասնաշենքի շահագործումը:

Ֆեդերացիան բացի մի շարք հանրապետական մրցաշարերի անցկացումից, Հայաստանում միջազգային 10 մրցաշար է կազմակերպել, որոնցից 6-ն անցկացվել են Ջերմուկում: Մրցաշարեր են անցկացվել նաեւ շախմատային կոմպոզիցիայի գծով, չեն անտեսվել վետերան շախմատիստների շահերը:

Սմբատ Լպուտյանն անդրադարձավ նաեւ միջազգային մրցաշարերում հայ շախմատիստների նվաճումներին: 2 տարում հայ շախմատիստները հաղթող են ճանաչվել միջազգային 25 մրցաշարում: Դրանցից 8-ը բաժին է հասնում Լեւոն Արոնյանին: Լեւոնի նշանակալի հաջողություններից են 2009-ի արագ շախմատի եւ 2010-ի կայծակնային շախմատի աշխարհի չեմպիոնների տիտղոսները, «Մեծ սաղավարտ» մրցանակը, 2010-ի Տալի հուշամրցաշարի հաղթողի կոչումը:

Որոշակի հաջողություններ են գրանցվել նաեւ պատանեկան շախմատում: Դրանցից գլխավորն այս տարի մինչեւ 16 տարեկանների շախմատային օլիմպիադայի չեմպիոնի տիտղոսի նվաճումն էր: Սամվել Տեր-Սահակյանը 2009-ին նվաճեց մինչեւ 18 տարեկանների Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը, իսկ այս տարի աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններում արժանացավ արծաթե մեդալների:

Լպուտյանը նշեց, որ տղամարդկանց թիմային առաջնություններում մեր հավաքականը որոշ չափով զիջել է դիրքերը: Նա հույս հայտնեց, որ հավաքականում Սերգեյ Մովսիսյանի ընդգրկումը հնարավորություն կտա կրկին հաջողություններ հասնելու միջազգային մրցաշարերում: Ի դեպ, հայտնի դարձավ, որ Սերգեյ Մովսիսյանի տեղափոխման դիմաց շախմատի Հայաստանի ֆեդերացիան Սլովակիայի ֆեդերացիային 30 հազար եվրո է փոխանցել:

Խոսելով առաջիկա խնդիրների մասին, Լպուտյանը նշեց, որ շարունակելու են շախմատը զարգացնել հանրապետությունում՝ շախմատի նոր դպրոցներ բացելու միջոցով: Ծրագիր կա նաեւ շախմատը հանրակրթական դպրոցներում արմատավորելու: Նաեւ խնդիր դրվեց Երեւանի բոլոր համայնքներում ունենալ շախմատի դպրոցներ: Ֆեդերացիան շարունակելու է միջազգային մրցաշարերի կազմակերպումը Հայաստանում: Կարեւոր խնդիր է նաեւ ամեն կերպ աջակցել Լեւոն Արոնյանին աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճելու դժվարին գործում: Այս առնչությամբ Սերժ Սարգսյանը նշեց, որ հատուկ ծրագիր է մշակված եւ ֆեդերացիան ամեն կերպ աջակցելու է Լեւոն Արոնյանին: Սակայն, ըստ նախագահի, Արոնյանն ինքը պետք է ընտրի իր մարտավարներին աշխարհի առաջնության հավակնորդների մրցաշարին նախապատրաստվելիս:

Համաժողովի մասնակիցները շախմատի ֆեդերացիայի աշխատանքը գնահատեցին բավարար: Ֆեդերացիայի նախագահի պաշտոնում առաջադրվեց միայն գործող նախագահ Սերժ Սարգսյանի թեկնածությունը, որն էլ միաձայն վերընտրվեց իր պաշտոնում:

Վերջում նախագահը ասկե, արծաթե եւ բրոնզե մեդալներ ու դրամական պարգեւներ հանձնեց շախմատի Հայաստանի տղամարդկանց առաջնության մրցանակակիրներ Ռոբերտ Հովհաննիսյանին, Սամվել Տեր-Սահակյանին ու Զավեն Անդրեասյանին:

Միայն մեկ բրոնզե մեդալ

Թբիլիսիում ավարտված ձյուդոյի աշխարհի գավաթի խաղարկությունում տասամի դուրս եկած Հայաստանի 11 ձյուդոյիստներից միայն 60 կգ քաշային Հովհաննես Դավթյանին հաջողվեց մրցանակակիր դառնալ՝ նվաճելով բրոնզե մեդալ: Առաջին գոտեմարտում հայ ձյուդոյիստը հաղթեց ֆրանսիացի Ժերեմի Գադոուֆսին, հաջորդում պարտվեց վրացի Պատա Մերեբաշվիլուն: Չնայած պարտությանը, Դավթյանն իրավունք ստացավ շարունակելու պայքարը բրոնզե մեդալի համար: Հաջորդաբար հաղթելով վրացի ձյուդոյիստներ Բեթկիլ Շուկվանիին եւ Դավիթ Ասումբանին, Հովհաննես Դավթյանն արժանացավ բրոնզե մեդալի: Քաշային նույն կարգում հանդես եկած Գոռ Հարությունյանը գրավեց 7-րդ տեղը:

Մրցանակակիր դառնալուն մոտ էր նաեւ Արմեն Նազարյանը: Մինչեւ 66 կգ քաշային կարգում հաղթելով թուրք Ուզուն Հալիլ Իբրահիմին եւ վրացի Արսեն Մախարաշվիլուն, Արմենը 3-րդ գոտեմարտում զիջեց ռուսաստանցի Դենիս Լավրենտեւին: 3-րդ տեղի համար մրցապայքարում Նազարյանը հաղթեց բելառուս Դմիտրի Շերշանին, սակայն պարտվեց ռուսաստանցի Միխայիլ Պուլյաեւին՝ բրոնզե մեդալը զիջելով մրցակցին: Նազարյանը գրավեց 5-րդ տեղը:

Մեր մյուս ձյուդոյիստները՝ Համբարձում Տոնոյանը (66 կգ), Անդրանիկ Չափարյանը (73 կգ), Ռոբերտ Վարդանյանը (73 կգ), Արսյոմ Բաղդասարյանը (73 կգ), Գրիգոր Իվանյանը (60 կգ), Պավլիկ Վարդազարյանը (66 կգ), Արթուր Երանոսյանը (66 կգ) եւ Հակոբ Առաքելյանը (100 կգ) անհաջող ելույթներ ունեցան՝ չկարողանալով տեղ զբաղեցնել ուժեղագույն ութնյակում:

50 մլն ֆունտ ստեռլինգ Տորեսի համար

Հունվարի 31-ին Եվրոպայում փակվեց տրանսֆերային պատուհանը: Վերջին օրը տեղի ունեցավ հունվարի ամենախոշոր գործարքը: Լոնդոնի «Չելսին» 50 մլն ֆունտ ստեռլինգով գնեց «Լիվերպուլի» խոպանացի հարձակվող Ֆեռնանդո Տորեսին: Վերջինս Լոնդոնում բուժզննում անցնելուց հետո 5,5 տարվա պայմանագիր է կնքել «Չելսիի» հետ: Այդ ընթացքում Տորեսը 80 մլն ֆունտ ստեռլինգ կստանա: Նրա շաբաթական աշխատավարձը կկազմի 200 հազար ֆունտ ստեռլինգ, ինչը գրեթե 2 անգամ գերազանցում է ֆուտբոլիստի նախկին վաստակը:

Նշենք, որ Ռոման Աբրամովիչի որդի «Չելսին» 2010-ին առաջին անգամ ֆինանսական տարին ավարտեց դրական հաշվեկշռով: Ակումբի եկամուտը կազմել է 3,8 մլն ֆունտ ստեռլինգ: Բացի Տորեսից, «Չելսին» նաեւ 20 մլն եվրո է վճարել «Բենֆիկայի» պաշտպան Դավիթ Լուիսի համար: Իսկ «Լիվերպուլը» կազմը համալրել է «Այաքսի» հարձակվող Լուիս Սուարեսով ու «Նյուքասլի» ֆուտբոլիստ Էնդի Քերոլով: Սուարեսը «Լիվերպուլի» հետ պայմանագիր է կնքել մինչեւ 2016-ը: Իսկ անգլիական ակումբը նրա տրանսֆերի դիմաց 26,5 մլն ֆունտ ստեռլինգ է վճարել:

«Կիլիկիան» լուծարվեց

Ֆուտբոլի Հայաստանի ֆեդերացիան բավարարել է «Կիլիկիայի» դիմումը, որը ֆինանսական ծանր վիճակի պատճառով հրաժարվել էր առաջնության եւ գավաթի խաղարկության մասնակցությունից:

Այսպիսով, այս տարվա բարձրագույն խմբի առաջնությունը կրկին կանցկացվի 8 թիմերի մասնակցությամբ, 4 շրջանով: ՀՖՖ-ին հարկ կլինի նոր խաղացանկ կազմել: Գավաթի խաղարկությունում էլ նոր վիճակահանություն կանցկացվի «Շիրակ» եւ «Արարատ» ակումբների միջեւ՝ «Փյունիկի» եւ «Ուլիսի» մրցակիցներին որոշելու համար:

Հակոբյանը զիջեց դիրքերը

Ջիբրալթարի շախմատի մրցաշարի 7-րդ տուրում Վարուժան Հակոբյանը սեւերով պարտվեց Էռնեստո Ֆեռնանդեսին ու 4 միավորով նահանջեց 58-րդ հորիզոնական:

6 միավորով աղյուսակը շարունակում է միանձնյա գլխավորել Վասիլի Իվանչուկը, որը ոչ-ոքի խաղաց Վիկտոր Միխայլեւսկու հետ: Վերջինս 5,5 միավորով Նայջել Շորթի, Դանիել Ֆրիդմանի, Միխայիլ Ռոիզի, Նարայանան Գոպալի ու Սալոմե Մելիայի հետ հետաքրքրում է առաջատարին:

կ²ІІІ´ա

Ատոմ Դանիելյանն արծաթե մրցանակակիր

Ղազախստանի Ուրալսկ քաղաքում անցկացված սամբոյի աշխարհի գավաթի խաղարկության փուլում հաջող ելույթ ունեցավ Հայաստանի միակ ներկայացուցիչ, ստեփանակերտցի Ատոմ Դանիելյանը: Անցած տարվա աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոնը դարձավ արծաթե մրցանակակիր մինչեւ 74 կգ քաշային կարգում:

Մեր մարզիկի համար հաստկապես ծանր էր կիսաեզրափակիչ գոտեմարտը 2009-ի աշխարհի չեմպիոն Լեբեդեւի հետ: Դանիելյանը հաղթեց դժվարին պայքարում, սակայն մեջքի վնասվածք ստացավ, ինչը խանգարեց նրան եզրափակիչում հաջողության հասնել: Վճռորոշ գոտեմարտում Դանիելյանը զիջեց աշխարհի գավաթակիր, ռուսաստանցի Կուժելին:

Սամբոյի աշխարհի գավաթի խաղարկության հաջորդ փուլը կկայանա փետրվարին Բելառուսում: Այդ մրցաշարին մեր սամբիստները կնախապատրաստվեն Ծաղկաձորում, որտեղ երկշաբաթյա ուսումնամարզական հավաք կանցկացնեն, որից հետո էլ կընտրվեն աշխարհի գավաթի խաղարկության մասնակիցները:

Գալոյանի անդրանիկ հաղթանակը

Մոսկվայի շախմատի մրցաշարի 3-րդ տուրում Լիլիթ Գալոյանն անդրանիկ հաղթանակը տոնեց՝ առավելության հասնելով ռուսաստանցի Կարինա Համբարձումովայի նկատմամբ: 3 տուրից հետո Գալոյանը 1,5 միավորով 6-րդ տեղում է:

Առաջատարը մոնղոլ շախմատիստուհի Բատույագ Մոնգունտուլն է, որը 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ պարտության մատնելով Իոլանտա Զավադսկային: 2-ական միավոր ունեն Օլգա Գիրյան, Ալեքսանդրա Կոստենյուկը, Վալենտինա Գունինան եւ Ջժան Սյուեն:

«Շիրակը» պայքարելու է լավագույն քառյակում տեղ զբաղեցնելու համար

Երեկ «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում կայացավ «Շիրակի» գլխավոր մարզիչ Սամվել Պետրոսյանի հանդիպումը լրագրողների հետ: Ասուլիսի սկզբում ակումբի գործադիր տնօրեն Գեորգի Մաթեւոսյանը տեղեկացրեց, որ մեկ տարվա համագործակցության պայմանագիր է կնքվել իտալական «Կապա» հանրահայտ ընկերության հետ թիմի հանդերձավորումն ապահովելու նպատակով: Հայաստանում այդ ընկերության պաշտոնական ներկայացուցիչ «Մեգասպորտի» գլխավոր տնօրեն Արտաշես Մելքումյանը նշեց, որ սա առաջին պայմանագիրն է մեր հանրապետության թիմերի հետ: Այսօր «Կապայի» մարզահագուստն են կրում «Վալենսիան», «Սամպդորիան», «Ռոման», «Բորուսիան», «Վերդերը» եւ այլ հանրահայտ թիմեր: Չի բացառվում, որ հետագայում նշված թիմերից որեւէ մեկի եւ «Շիրակի» միջեւ համագործակցություն հաստատվի:

«Շիրակի» գլխավոր մարզիչ Սամվել Պետրոսյանն իր գոհունակությունը հայտնեց ֆուտբոլիստներից նոր մրցաշրջանի նախապատրաստական աշխատանքներում: Նա նաեւ շնորհակալություն հայտնեց ակումբի նոր սեփականատեր Արման Սահակյանին թիմի համար մարզումային բոլոր անհրաժեշտ պայմանները ստեղծելու համար:

«Շիրակը» մարզումները սկսել է դեկտեմբերի վերջին Գյումրիում, ապա ուսումնամարզական երկու հավաք է անցկացրել ֆուտբոլի ակադեմիայում եւ Ծաղկաձորում: Փետրվարի 7-ին թիմը կմեկնի Թուրքիայի Բելեք քաղաք, որտեղ նախատեսված է 12-օրյա ուսումնամարզական հավաք ստուգողական 4 մրցախաղով: Այդ հավաքի ընթացքում կփորձարկվեն բելգիացի 2 ֆուտբոլիստներ՝ մեկական պաշտպան եւ հարձակվող: Ներկայումս «Շիրակում» է մարզվում «Կիլիկիայի» նախկին հարձակվող Կարեն Խաչատրյանը: Թիմի հետ արդեն պայմանագրեր են կնքել Կարեն Ստեփանյանը, Հովհաննես Գրիգորյանը, Կարեն Ալեքսանյանը, Արմեն Տիգրանյանը, Եղիշե Մելիքյանը: Արտակ Օսեյանի հարցով առայժմ բանակցում են «Գանձասարի» հետ: Իսկ բելառուս դարպասապահի հարցում «Շիրակի» մարզական կազմը վերջնականապես կկողմնորոշվի փետրվարի 5-ին «Իմպուլսի» հետ կայանալիք ընկերական խաղից հետո:

Սամվել Պետրոսյանը նշեց, որ «Շիրակը» բավական տարեց թիմ է եւ հարկավոր է երիտասարդացնել: 12 ֆուտբոլիստ 30-ից անց են: Առայժմ թիմի հետ մարզվում է 41-ամյա Հովհաննես Թահմազյանը: Բացառված չէ, որ նա անցնի մարզչական աշխատանքի: Վնասվածքից հետո մարզումներն է սկսել 35-ամյա Արարատ Հարությունյանը: Իսկ Արամ Հակոբյանի ծառայություններից «Շիրակը» հրաժարվել է:

Խնդիր է դրվել երիտասարդացնել նաեւ «Շիրակ-2-ը», որում ներկայումս հանդես են գալիս 20-ից բարձր տարիք ունեցող ֆուտբոլիստներ: Ըստ Սամվել Պետրոսյանի, այնտեղ պետք է ընդգրկվեն 15-17 տարեկան պատանիներ, որպեսզի հերթափոխ պատրաստվի «Շիրակի» համար: Գլխավոր մարզիչը նշեց նաեւ, որ խնդիր է դրվել պայքարելու լավագույն քառյակում տեղ զբաղեցնելու համար:

Նոր մրցաշրջանում «Շիրակը» սեփական հարկի տակ նախատեսված հանդիպումներն առայժմ անցկացնելու է Իջեւանում: Ինչպես հայտնի է, «Շիրակի» մարզադաշտում ներկայումս վերանորոգման աշխատանքներ են ընթանում: Միայն գարնանը պետք է ցանվի խոտը: Այնպես որ մրցաշրջանի ավարտին թերեւս հնարավորություն լինի խաղալ Գյումրիի մարզադաշտում: Աշխատանքներ են տարվում նաեւ Գյումրիում մանկապատանեական մարզադպրոց հիմնելու հարցում:

Սամվել Պետրոսյանն իր գոհունակությունը հայտնեց նաեւ օգնականներից՝ Ֆելիքս Խոջոյանից ու Արթուր Հովհաննիսյանից: Իսկ «Շիրակի» նախկին բազմամյա գլխավոր մարզիչ Անդրանիկ Ադամյանը կմնա ակումբում խորհրդատու մարզչի կարգավիճակով: Գլխավոր մարզիչը հավաստիացրեց, որ ամեն ինչ անելու են «Շիրակի» հեղինակությունը վերականգնելու համար: Այդ գործում գյումրեցիներին հումորն ու թասիբը եւս կարեւոր դեր կխաղան:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքերով

Այսպիսի թույլ արագությամբ մենք երբեք չէինք շարժվել նույնիսկ «Կիլիկիա»-ով Բիսկայան ծոցում, որտեղ այդ փայտաշեն նավը պարզապես ծովագնացության հրաշքներ էր գործում: Երեք օր անընդմեջ շարունակվող հանդիպակաց հոսանքին ու հանդիպակաց քամուն գումարվեց նաեւ հանդիպակաց ցիկլոնը: Ես չեմ կրկնում ինս ինձ: Կրկնվում է դրամատիկական իրավիճակը: Չէ՞ որ մեզ սպասում են: Մեր ժամանման ժամկետի մասին հայտնել էինք հավանականության մեծագույն պաշարով: Բայց ո՞վ իմանար, թե տեղից չէինք շարժվելու: Ախ, ի՞նչ ուրամաշ բան է դա: Այն էլ, երբ նավը վալս է պարում ալիքների գագաթին: Եթե երբեւէ հարցնեն, թե ինչ էինք անում այդպիսի ժամերին եւ օրերին, կպատասխանեմ այնպես, ինչպես գրել եմ իմ հուշատետրում. հերթափոխայիններ Արմեն Նազարյանը եւ Վահագն Մաթեւոսյանը կանգնած են ղեկի մոտ, Սամվել Կարապետյանը ժամանակ առ ժամանակ դուրս է գալիս իր նավախցից ու բարձրանում նրանց մոտ, Հայկ Բաղալյանը քարտեզի վրա կռացած, կարկինն ու քանոնը ձեռքին երթուղու հաշվարկներ է կատարում (ես էի նրան խնդրել, որ նորզելանդական հայերին հայտնի մեր տեղ հասնելու մոտավոր ամսաթիվը): Կոկ Սաֆոն այսպիսի փոթորկալից օրերին չոր սնունդ է պատրաստում՝ երշիկով բուտերբրոդին կամ մակդոնալդին նմանվող ինչ-որ բան, քանզի մանր-մունր բաներ էլ է ավելացնում դրանց: Ասենք՝ կոնսերվացված մանրաձուկ կամ լոլիկի շերշիկներ (եթե ունենք) ու վարունգ: Բաբասը եւ Մուշեղը տախտակամածին զբաղված են գրոս առագաստով: Ես, ոտքս մի կողմ ձգած, որպեսզի հերթական անգամ նավը թեքվելիս չընկնեմ, թխկթխկացնում եմ գրամեքենաս, մաս հաճախ խփելով տառերի արանքին: Այ, այսպես կպատասխանեի այն հարցին, թե ինչ ենք անում այդ ժամանակ: Իհարկե, սիրտդ չի թեթեւանում եւ այն մտքից, որ մի որեւէ նավահանգստում ստիպված ես լինելու նորից բոլոր գործերդ թողած, զբաղվել առագաստանավով: Հորն հրվանդանից եւ Մագելլանի նեղուցից հետո անունով խաղաղ այս օվկիանոսը մեզ այնքան էլ խաղաղ չընդունեց: Ահռելի տարածքի վրա տեղ չունենք կանգնելու, շունչ առնելու, խելքի գալու: Այնինչ գործեր ու խնդիրներ են, որ կուտակվել են: Դրանք եւ՛ առագաստներն են, եւ՛ նավասարքերը: Նման բան լինում է բոլոր ծովագնացների հետ:

Հիշում եմ, թե ինչպես «Կիլիկիա» ինքնաշեն առագաստանավով յոթ ծովերով Եվրոպայի շուրջ նավարկության առաջին փուլում, Փոթիից Սոչի ընկած ճանապարհի կեսին պատռվեց մեծ առագաստը: Երկար ժամանակ առաջ էինք շարժվում փոքրիկ ստակսելներով: Տղաներից մեկը բարձրանում եւ մի տեսակ ընդհանրացված ասաց, թե դեռ խորհրդային ժամանակներից են մեր առագաստները պատռվում: Խորհրդային տաք գարեջրի հարցում կհամաձայնվեի, բայց փչած առագաստների հարցում՝ ոչ: Բոլորի մոտ էլ առագաստները միշտ պատռվել են: Մանավանդ շուրջերկրյա նավարկություններին նվիրված մեծաքանակ հրապարակումներից շատերն եմ կարդացել: Եվ գիտեմ բազմաթիվ օրինակներ, երբ առագաստներ են պատռվել հայտնի ծովագնացների մոտ, որոնց համար հատուկ առագաստանավեր էին կառուցվում եւ հատուկ առագաստներ կարվում: Նրանց թվում՝ եւ՛ սըր Ֆրենսիս Չիչեստերը, եւ՛ Չեյ Բլայթը, եւ շատ-շատ ուրիշներ: Կարդալով նրանց գրքերը, զարմանում ես, թե ինչպես էր ամեն ինչ պատռվում ու կոտրվում: Օրինակ բերեմ ամենահայտնի առագաստանավային մրցորդներից մեկի՝ Ալեն Ժերբոյի կյանքից. «Ջիբրալթարից մինչեւ Նյու Յորք Ատլանտիկան հատելիս ստիպված էինք նորոգել պատռված առագաստները: Անընդհատ կտրվում էին նաեւ կայմապահ ճոպանները, առագաստի թոկասարքերը, ֆալները, այդ պատճառով էլ առագաստները հաճախ հայտնվում էին ծովում»: Այսպիսի հարյուրավոր օրինակներ կարող եմ բերել, եւ բոլորն էլ՝ կապված ծովային մեծ տերությունների հետ: Այնպես որ, խորդային Միությունում լավն էին ոչ միայն բալետն ու հոկեյը, այլեւ առագաստները:

...Այսքան երկար ու այսքան «երկարաձիգ» երբեք չէինք շարժվել որեւէ երկրի սահմանների երկայնքով՝ մեր հայրենակիցներին հանդիպելու համար: Եվ երբեք այս քանակի արգելքներ ու խոչնդոտներ չէին եղել մեր ճանապարհին: Եվ այդ ամենը հանուն մի բուռ հայրենակիցների, որոնք, ինչպես լավ հայտնի է մեզ, գործնականում չեն տիրապետում մայրենի լեզվին: Համայնքի պատմությանը դեռ կանդրադառնանք: Ես ունեմ բոլոր անհրաժեշտ նյութերը իմ նավային գրադարանում: Իսկ առայժմ, մինչ կհասնենք հանդիպման նավահանգիստ, մի քանի բառ լեզվի մասին: Բարդ թեմա է, վեճեր ու բանավեճեր հարուցող թեմա: Սակայն չեմ կարծում, թե լռելն ավելի լավ է: Մենք գիտենք, թե երբեմն ինչի է հանգեցնում ջայլամի քաղաքականությունը: Իմ հարցում խնդիր կա եւ անհրաժեշտ է այն լուծել: Խոսքը փաստի մասին է, ճշմարտության մասին, որի չափանիշը պրակտիկան է: Եվ ուրեմն եկեք գործնական օրինակներ բերենք: Իհարկե, կարելի է բերել նաեւ հարյուրավոր օրինակներ, երբ գործնականում մայրենի լեզվին չտիրապետող հայերը, դրսեւորելով մեծագույն հայրենասիրություն, ահռելի օգնություն են ցուցաբերել հայրենիքին: Բայց ես բոլորովին էլ չեմ խոսում խնդրի նկատմամբ այդ մոտեցման մասին: Խոսքն այն մասին է, որ հայը, կամ հայերի մի ողջ խումբ, կամ մեր հայրենակիցների մի ողջ համայնք, իրենցից անկախ պատճառներով չեն սովորել խոսել մայրենի լեզվով: Չգիտեն գրել ու կարդալ: Եվ բավական է մի քանի անգամ նրանց հանդիմանել իրենց դժբախտության (ոչ մեղքի) համար, որպեսզի անմիջապես համակվեն օտարացման զգացումով: Դա շատ ավելի վատ է, քան թերարժեքության չարաբաստիկ բարդույթը: Իսկ հիմա՝ կոնկրետ օրինակի մասին: Այո, կա այդպիսի պատմական օրինակ: Դրանք հրեաներն են, իսրայելացիք: Այդ մասին ես շատ եմ գրել: Իմ ողջ կյանքի ընթացքում, մանավանդ խորհրդային ժամանակներում, ես չեմ տեսել մի հրեայի (իսկ իմ ընկերների մեջ շատ են եղել հրեաներ եւ կան), որը տիրապետեր եբրայերենին կամ իդիշին, հրեական կամ այսպես կոչված՝ քառակուսի գրերին: Սակայն չեմ հիշում մի դեպք, որ նրանք այդ պատճառով բարդույթի մեջ ընկնեին: Պարզապես հաշվի էին առնում կյանքի իրողությունները եւ հավատարիմ մնում իրենց ավանդույթներին, պատմությանը, նախնիների հանդեպ սիրուն եւ հպարտանում էին իրենց հայրենակիցների յուրաքանչյուր հաջողությամբ:

Գիտակցել կյանքի այդ իրողությունները՝ բոլորովին էլ չի նշանակում նստել թախտին, սպասել բախտին, ոչինչ չանել, ոչինչ չձեռնարկել: Ավելին, խոսքը ինչ-որ մի պարզունակ, երկրորդական հարցի մասին չէ, այլ մեր ժողովրդի հարատեւության մասին: Ես լավ գիտեմ, որ հիմա արդեն մենք ունենք օջախներ, որտեղ գործնականում զբաղվում են, օրինակ, լուսավորության հարցերով: Ասել կուզի՝ լեզվի, պատմության, մշակույթի: Եվ այդ ամենը՝ «Հայկական կրթություն» ընդհանուր անվանումով, «Ամեն տեղ եւ ամենուր» նշանաբանով՝ համամոլորակային մասշտաբով: Աշխատելով այս ռեպորտաժի թեմայի վրա, ես իմացա, որ Համահայկական բարեգործական միության շրջանակներում գործում է հասարակական կազմակերպություն՝ Հայկական վիրտուալ քոլեջ: Ըստ էության դա նորագույն ժամանակակից ուսումնական հաստատություն է, որի դասասենյակներին կամ լսարաններին փոխարինում են տունը, աշխատասենյակը, որեւէ փոխադրամիջոց, այդ թվում նաեւ «Արմենիա» առագաստանավը, որտեղ էլ այն գտնվելիս լինի: Ես չեմ կասկածում, չեմ ծաղրում եւ չեմ չափազանցում հենց միայն այն պատճառով, որ թեման ինձ համար չափազանց լուրջ է եւ չափազանց պատասխանատու: Դա փաստորեն ցրված, ողջ աշխարհում տեղաբաշխված համահայկական համալսարան է, քանի որ դասավանդումը կատարվում է, եթե կարելի է այսպես արտահայտվել՝ սփյուռքի բոլոր լեզուներով (արեւելահայերեն, արեւմտահայերեն), անգլերենով, ռուսերենով, ֆրանսերենով, իսպաներենով: Ծրագրվում է մտցնել նաեւ արաբերենն ու պարսկերենը: Ունի յուրաքանչյուր ժողովրդի համար ամենագլխավոր երեք ֆակուլտետները՝ լեզվի, պատմության, մշակույթի: Մանրամասնություններն ու լրացումները արդեն նախագծի հեղինակների եւ կազմակերպիչների գործն է: Փաքտ Աստծո, ծրագիրն աջակցում է պետությունը, ի դեմս Սփյուռքի նախարարության: Բայց ինձ թվում է, անհրաժեշտ են նաեւ այլ քայլեր, որոնք կհամապատասխանեն խնդրի ռազմավարական կարեւորությանը:

Ամենից հետո է հուսահատորեն ձեռքերը տարածել եւ անքթությամբ տրտմությամբ արձանագրել այն փաստը, իբր՝ եւս մի քանի տարի եւ հայկական ոգին կխամրի Սփյուռքում: Ի դեպ: այդպես էին մտածում նաեւ վաղեմի ժամանակներում: Բայց բարեբախտաբար Սփյուռքն ապրում է եւ տոկում: Պարզապես պետք է սեւեռուն հայացքով նայել հեռու եւ ոչ հեռավոր ապագային, հիշելով, որ հիմա ուրիշ են ժամանակները, ուրիշ են արագությունները: Եվ ինքը՝ կյանքն էլ ուրիշ է:

Եվ այդ առումով պատահական չէր, որ Ջիլին ընդգրկեցինք Մեսրոպ Մաշտոցի անունը կրող ծովարշավի ծրագրի երթուղում: Այն մասին, թե դա ինչ նստեց մեզ վրա, ժամանակի եւ տարածության, էներգիայի եւ առողջության ինչպիսի վնասներ կրեցինք, կպատմեմ հաջորդ ռեպորտաժում:

ՋՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ
«Արմենիա» առագաստանավ,
Խաղաղ օվկիանոս

Սփյուռքը ռազմավարական հասկացություն է

մար ռազմավարական նշանակության խնդրի: Ես լավ գիտեմ, որ հիմա արդեն մենք ունենք օջախներ, որտեղ գործնականում զբաղվում են, օրինակ, լուսավորության հարցերով: Ասել կուզի՝ լեզվի, պատմության, մշակույթի: Եվ այդ ամենը՝ «Հայկական կրթություն» ընդհանուր անվանումով, «Ամեն տեղ եւ ամենուր» նշանաբանով՝ համամոլորակային մասշտաբով: Աշխատելով այս ռեպորտաժի թեմայի վրա, ես իմացա, որ Համահայկական բարեգործական միության շրջանակներում գործում է հասարակական կազմակերպություն՝ Հայկական վիրտուալ քոլեջ: Ըստ էության դա նորագույն ժամանակակից ուսումնական հաստատություն է, որի դասասենյակներին կամ լսարաններին փոխարինում են տունը, աշխատասենյակը, որեւէ փոխադրամիջոց, այդ թվում նաեւ «Արմենիա» առագաստանավը, որտեղ էլ այն գտնվելիս լինի: Ես չեմ կասկածում, չեմ ծաղրում եւ չեմ չափազանցում հենց միայն այն պատճառով, որ թեման ինձ համար չափազանց լուրջ է եւ չափազանց պատասխանատու: Դա փաստորեն ցրված, ողջ աշխարհում տեղաբաշխված համահայկական համալսարան է, քանի որ դասավանդումը կատարվում է, եթե կարելի է այսպես արտահայտվել՝ սփյուռքի բոլոր լեզուներով (արեւելահայերեն, արեւմտահայերեն), անգլերենով, ռուսերենով, ֆրանսերենով, իսպաներենով: Ծրագրվում է մտցնել նաեւ արաբերենն ու պարսկերենը: Ունի յուրաքանչյուր ժողովրդի համար ամենագլխավոր երեք ֆակուլտետները՝ լեզվի, պատմության, մշակույթի: Մանրամասնություններն ու լրացումները արդեն նախագծի հեղինակների եւ կազմակերպիչների գործն է: Փաքտ Աստծո, ծրագիրն աջակցում է պետությունը, ի դեմս Սփյուռքի նախարարության: Բայց ինձ թվում է, անհրաժեշտ են նաեւ այլ քայլեր, որոնք կհամապատասխանեն խնդրի ռազմավարական կարեւորությանը:

Ամենից հետո է հուսահատորեն ձեռքերը տարածել եւ անքթությամբ տրտմությամբ արձանագրել այն փաստը, իբր՝ եւս մի քանի տարի եւ հայկական ոգին կխամրի Սփյուռքում: Ի դեպ: այդպես էին մտածում նաեւ վաղեմի ժամանակներում: Բայց բարեբախտաբար Սփյուռքն ապրում է եւ տոկում: Պարզապես պետք է սեւեռուն հայացքով նայել հեռու եւ ոչ հեռավոր ապագային, հիշելով, որ հիմա ուրիշ են ժամանակները, ուրիշ են արագությունները: Եվ ինքը՝ կյանքն էլ ուրիշ է:

Եվ այդ առումով պատահական չէր, որ Ջիլին ընդգրկեցինք Մեսրոպ Մաշտոցի անունը կրող ծովարշավի ծրագրի երթուղում: Այն մասին, թե դա ինչ նստեց մեզ վրա, ժամանակի եւ տարածության, էներգիայի եւ առողջության ինչպիսի վնասներ կրեցինք, կպատմեմ հաջորդ ռեպորտաժում:

ՋՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ
«Արմենիա» առագաստանավ,
Խաղաղ օվկիանոս

«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր

Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից

▼ Օրենսդրական նորություններ - Պարզաբանումներ - Խորհրդատվություն
▼ «Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար

Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԵՌՈՒՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ

ZDF-ի նոր վավերագրությունը՝ դեպի Լեռնային Ղարաբաղ

Գերմանական հեռուստատեսության երկրորդ ալիքը՝ ZDF-ը փետրվարին 2-ին տեղական ժամանակով 00.35 -01.20-ին կհեռարձակի «Կովկասյան հանգույց. Ճամփորդություն դեպի Լեռնային Ղարաբաղ» վերնագրով վավերագրությունը:

Նոր պատերազմը սպառնո՞ւմ է արդյոք Եվրոմիության դարպասների մոտ, Կովկասին մերձակա Լեռնային Ղարաբաղին, մի տարածք, որ Սաար երկրամասից 2 անգամ ավելի մեծ է: Գերմանացի ակնդիրների համար հասկանալի համեմատությամբ այս հարցն է, որ լեռների մեջ ընկղմված «սեւ այգի» է առաջնորդել 2011-ին Գերմանիայում արտադրված վերոնշյալ ֆիլմի հեղինակ ZDF-ի լրագրող Դիթմար Շումաննին՝ (Dietmar Schumann) օպերատոր Ֆրանկ Ֆիլթորֆի (Frank Vieltorf) ուղեկցությամբ:

Այն համառոտ տեղեկատվությունը, որ ֆիլմի մասին մատուցված էր հեռուստատեսության կայքէջում, ստիպում է առավել աչալուրջ հետեւել հեղինակային այս աշխատանքին: Մնացյալը՝ ֆիլմը դիտելուց հետո:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Երիտասարդության եւ սիրո տոների առթիվ Orange-ն առաջարկում է սիրելիների հետ ընդմիշտ խոսել անվճար

Orange-ը շնորհավորում է բոլոր երիտասարդներին սիրո եւ երիտասարդության գալիք տոների առթիվ եւ ներկայացնում բազմաթիվ հատուկ առաջարկներ՝ սիրելիների հետ ավելի հաճախ ու ավելի երկար զրուցելու, ինչպես նաեւ միմյանց հաճելի պահեր պարգեւելու համար:

Orange-ի «Խոսենք» եւ «Ամեն ամիս» ձայնային ծառայությունների ինչպես նոր, այնպես էլ ներկա բաժանորդները կարող են մինչեւ փետրվարի 19 ընտրել մեկ Orange համար եւ ընդմիշտ ամեն ամիս ստանալ 500 անվճար րոպե՝ նրա հետ խոսելու համար: Պարզապես անհրաժեշտ է սիրելիի համարը SMS-հաղորդագրությամբ ուղարկել 2010 կարճ համարին: Սիրելի համարն ակտիվ պահելու համար այս առաջարկից օգտվող բաժանորդները պետք է ամեն ամիս հաշիվը լիցքավորեն առնվազն 1000 դրամով: Այն բաժանորդները, ովքեր արդեն ունեն սիրելի համար, ցանկության դեպքում կարող են փոխել այն՝ նոր համարն ուղարկելով 2010 կարճ համարին:

«Փետրվարը սիրո ու սիրահարների ամիսն է: Ինչպես Սուրբ Սարգսի, այնպես էլ Սուրբ Վալենտինի տոները սիրված են մեր հաստատված երիտասարդ բաժանորդների կողմից, ու մենք առանձնահատուկ ուրախությամբ ենք պատրաստել այս առաջարկը նրանց համար: Բացի անվճար զանգերից՝ մինչեւ փետրվարի 19 Orange «Խոսենք» եւ «Ամեն ամիս» ծառայությունների բոլոր բաժանորդները կարող են անսահմանափակ թվով անվճար MMS-ներ ուղարկել Orange-ի բոլոր բաժանորդներին՝ կիսվելով լավագույն պահերով ու զգացմունքներով, ինչպես նաեւ Orange Աշխարհ WAP պորտալից բեռնել հատուկ թեմատիկ բովանդակություն՝ նկարներ, անիմացիաներ, զանգեր, java հավելվածներ եւ այլն», ասաց Orange-ի մարկետինգի տնօրեն Արամ Մկրտչյանը:

Իմ Orange մենյուն նույնպես հագեցվել է տոնական բովանդակությամբ՝ զանգեր, նկարներ եւ այլն, եւ հասանելի է Orange-ի ձայնային ծառայությունների բոլոր բաժանորդներին:

Տոնական տրամադրությունը վերաբերում է նաեւ Orange Ինտերնետին: Մինչեւ փետրվարի 19 մեկ տարով բաժանորդագրվելով Orange ինտերնետին՝ բաժանորդներն առաջին ամսվա իրենց ինտերնետը կվայելեն անվճար եւ ինչպես միշտ՝ «Ինտերնետ Հիմա» մոդեմը ձեռք կբերեն ընդամենը մեկ դրամով:

Դիելտոր «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն «ԱԴԱՄԱՆԴ» ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում իրականացնելու է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ -ին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

- Բնակելի տուն, ընդ. մակերեսը 130.34 քմ եւ հողամաս՝ 0.081 հա: Հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, գ. Մարմարաշեն, 32 փող., թիվ 3: Մեկն. գինը՝ 9300000 դրամ:
- Բնակելի տուն, ընդ. մակերեսը 226.51 քմ եւ հողամաս՝ 0.027 հա: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Էրեբունի համ., Գաջեգործների փող., տուն 4: Մեկն. գինը՝ 11000000 դրամ:
- Բնակելի տուն, ընդ. մակերեսը 233.7 քմ, օժ. կառույցներ՝ 33.9 քմ եւ հողամաս՝ 0.124 հա: Հասցե՝ ՀՀ, Վայոց Ձորի մարզ., ք. Եղեգնաձոր, Գլաձորյան 2-րդ նրբ., տուն 3: Մեկն. գինը՝ 8500000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակով ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 04.03.2011թ-ից մինչեւ 30.12.2011թ. յուր. աշխ. օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտերը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեներում յուր. օր ժամը 11.00-ից – 20.00-ն: Աճուրդի մասնակիցները՝ ֆիզիկական անձի դեպքում պետք է ներկայացնեն անձնագիր, իրավաբանական՝ լիազորագիր եւ պետ.ռեգիստրի վկայականի պատճենը: Նախավճար չի սահմանված: Հաղթող է արձանագրվում լավագույն գնային առաջարկ ներկայացրած անձը: Լրացուցիչ տեղեկություններ, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու եւ այն անվճար ստանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել www.borsa.am :

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 1.2.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: